

ՀԱՅ ՄԱՆԿԱՎԱՐԺ

ուսումնագիտական եւ մանկավարժական հանդէս



Հրատարակութիւն
Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի
Դպրոցական Հայագիտութեան Զարգացման Գրասենեակի



«Հայ Մանկավարժ»

ուսումնագիտական եւ մանկավարժական հանդէս
լոյս կը տեսնէ տարին չորս անգամ

*Հայկական կրթական հաստատութիւններու եւ անոնց հովանաւոր
մարմիններու պատասխանատուներուն, հայկական վարժարաններու
ուսուցիչ-ուսուցչուհիներուն, դպրոցական հայագիտութեան խնդիր-
ներով հետաքրքրուած գիտական եւ մտաւորական հանրութեան եւ
ծնողներու համար*

Հրամանով

Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Ամենապատիւ եւ Գերերջանիկ
Տէր Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարքին

Պատասխանատու Խմբագիր

Հայր Վարդան վրդ. Գազանձեան

Խմբագիր

Եւա Գորէսեան

Տնօրէն

Վարդան Թաշձեան

Վերստուգող սրբագրիչ

Կարօ Առաքելեան

Հրատարակիչ


Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի
Դպրոցական Հայագիտութեան Զարգացման Գրասենեակ
«Սուրբ Գրիգոր Նարեկացի» Կեդրոն
Հայ Կաթողիկէ Պատրիարքարան
2078-5605 Ժէիթաուի Պէյրութ-Լիբանան

Հեռ.: + 961 1 570559

Հեռատիպ: 961 1 570562

Էլ.հասցէ: nareg@armeniancatholic.org

www.armeniancatholic.org



ՀԱՅ ՄԱՆԿԱՎԱՐԺ

ուսումնագիտական եւ մանկավարժական հանդես

Հրատարակություն
Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի
Դպրոցական Հայագիտութեան Զարգացման
Գրասենեակի

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«Առողջ դաստիարակությունը անբաժան հարստությունն է անհատին», - կ'ըսէ փրոֆ. Խաչեր Գալուստեան:

Պատմությունը կը վկայէ, որ ժամանակի ընթացքին քաղաքական, գիտական թէ ընկերային բարեփոխումներն ու յառաջխաղացքը սնուցուած են դաստիարակչական այլազան փիլիսոփայութիւններով եւ անոնց կիրարկման տարբեր եղանակներով:

Դաստիարակութեան մեկնակէտը աշակերտն է, որ պիտի դառնայ վաղուան զարգացած, գործունեայ եւ ուրախ մարդը. այն մարդը, որ գիտէ հասնիլ հոն, ուր ինք կ'ուզէ:


Իրաքանչիւր աշակերտ՝ մանուկ թէ պատանի, ունի իր իրայատկութիւնները, իր կարողութիւնները, իր հետաքրքրութիւնները, իր ընտանեկան թէ ընկերային ենթահողը:

Աւելին. օրուան ժամը, ապրած ֆիզիքական կառոյցը, շրջապատը եւ շարք մը այլ ազդակներ խորապէս կը ներգործեն անոր ներաշխարհին վրայ:

Իրա՛ դաստիարակը կամ մանկավարժը այն անձն է, որ, վերոյիշեալ բոլոր տուեալները լաւ ճանչնալով եւ ի մտի ունենալով, պիտի կարենայ աշակերտին բնածին կարողութիւններն ու հակումները զարգացնող ուղեցոյցն ու առաջնորդը դառնալ՝ զայն մղելով հարուստ գաղափարներու եւ արժէքներու:

Բովանդակալից ուսուցում տեղի կ'ունենայ, երբ աշակերտը ըմբռնէ եւ իրացնէ իրեն տրուած գիտելիքը, հասկնայ, թէ այդ գիտելիքը ինչո՞վ կապուած են իրեն եւ իր կեանքին, թէ ինչո՞ւ պէտք է տիրապետէ անոնց:

Երբ կը յարգուին աշակերտին տարիքային թէ զարգացման զգայուն հանգրուանները, երբ գաղափարները անոր կը ներկայացուին համապատասխան իր մտային, ֆիզիքական թէ զգացական կարողութիւններուն, ուրեմն անոնք կ'իրացուին դիրութեամբ: Այս պատճառով է, որ նոյն գաղափարը՝ յաւելեալ բարդութիւններով եւ ամբողջականութեամբ, աշակերտին տարբեր հանգրուաններուն կը ներկայացուի երկրորդ եւ երրորդ անգամ:



Գիտնալու կարիքը անյագ է մարդ արարածին մօտ: Թէեւ աշակերտը դպրոցական բոլոր աշխատանքները հաասարապէս գրաւիչ չի գտներ, սակայն, այնուամենայնիւ, ան կրատրական էակ մը չէ: Ան յաճախ պիտի փորձէ գնահատել իր ճարտարութիւններն ու զօրութիւնները, պիտի աշխատի գտնել իր որոշիչ տեղը իր ընկերներուն մօտ: Եւ այս բոլորին մէջ իրենց խթանիչ դերը ունին մանկավարժն ու դաստիարակը: Փոքրիկի մը խթանուած յարաբերութիւնները իր ուսուցիչին հետ պիտի մղեն զինք բաւարար ձիգ ընելու՝ յաղթահարելու իր առջեւ ցցուած բոլոր խնդիրները:

Տան ազդեցութիւնը անվիճելի որոշիչ դերը ունի փոքրիկին դաստիարակութեան մէջ. սակայն դպրոցական կեանքին մէջ դրական մօտեցումով կիրարկուած դաստիարակութիւնը իր անջնջելի դրոշմը պիտի ձգէ անոր վրայ:

Առողջ դաստիարակութեամբ պիտի կարենանք հասցնել աշակերտը հոն, ուր ան լիարժէքօրէն գիտէ զատորոշել ձիշղն ու սխալը, գնահատել ուսումն ու կրթութիւնը, հասկնալ արդար եւ լուրջ աշխատանքի կարեւորութիւնը, յարգել ինքզինք ու իր շրջապատը, հաստատել իր ինքնութիւնը եւ ապրիլ իր ներքին ազատութիւնն ու անդորրութիւնը:

Երբ հաւատանք, թէ «ամէն փոքրիկ միշտ ունի շատ աւելին, քան այն, ինչ որ ինք կ'արտադրէ» եւ մեր դաստիարակչական առաքելութեան մէջ կարենանք ամրապնդել անոր մօտ, թէ «ինք աւելի հարուստ աղբիւր է գաղափարներու, քան ինչ որ ինք կը խորհի», ուրեմն մենք անոր մէջ կը հաստատենք այնպիսի ամուր արմատներ, որոնք որպէս սիւներ պիտի ծառայեն անոր՝ կառուցելու իր հարուստ հոգեմտաւոր աշխարհը, որ անբաժանելի եւ անկորնչելի ժառանգ մը պիտի դառնայ ու պիտի ընկերակցի անոր ամբողջ կեանքի ընթացքին:

ՀԻՆԳ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

*Պէյրուֆի Հայկազեան Համալսարանի Նախագահ
Վեր. Դոկտ. Փօլ Հայտօսթեանի խօսքը՝
"Հայ Մանկավարժ"-ի շնորհահանդէսին*

Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի, Սուրբ Գրիգոր Նարեկացի Կեդրոնի մանկավարժական այս հանդէսին հիմնադրութեան օրը մեր մշակութային, կրթական կեանքին մէջ վերածնունդի շնորհաւորելի խոստում է :

Պատեհ առիթ է այս հանդիսաւոր պահը՝ վեր առնելու այն էական ու հրատապ նիւթերը, որոնք պէտք ունին քննական ուսումնասիրութեան եւ հարազատ կիրարկումի: Ահաասիկ հինգ մանկավարժութեան հարցեր որոնք կրնան ծառայել որպէս ուրուագիծ:

1. Մանկավարժին ինքնութիւնը.

Մանկավարժին ինքնութիւնը, այսինքն անոր լեզուն, երեւակայութեան պատկերներն ու սահմանները, պատկանելիութեան հիմներն ու օղակները, եւ մանաւանդ ինքնագիտակցութիւնը՝ այսինքն սորվեցնողի, սորվողի եւ օրինակելի հայ անձ ըլլալու ինքնաձանաչումը:

2. Մանկավարժին կոչումը, այսինքն անոր հոգեւնպաստ առաքելութիւնը կամ մանկավարժին հոգեկան տունը.

Մանկավարժը չի կրնար միայն հանգիստ անձ ըլլալ, այլ ըլլալու է նաեւ մտահոգ ու մղուած դէպի կատարելը: Ան չի կրնար նաեւ ըլլալ միայն անձկութեան տէր – այլ պէտք է ըլլայ հոգեկան հաւասարակշռութեան մէջ վստահ ու հանգիստ: Անհաւասարակշիռ մանկավարժը կ'առաջնորդէ աշակերտները անորոշութեան, մինչ հաւասարակշիռ մանկավարժը կը ծառայէ որպէս ածման վէմ ու վստահութեան աղբիւր:

Անձին, նաեւ մանկավարժին, հոգին ունի կշռոյթ ու հնչիւն. ան կրնայ սաւառնիլ, կամ ծփալ, կամ ձօձուիլ – ըստ իր հոգեկան ապրումներուն:

Կոչումը կը պահանջէ նաեւ ներդաշնակութիւն ու հարազատութիւն անձի կարողութեան, պատրաստութեան, փորձառութեան եւ վեհ նպատակներուն միջեւ: Կոչում կը նշանակէ մանկավարժութիւնը տեսնել որպէս հոգեկան տուն եւ հարազատ բոյն:

3. Մանկավարժին պատրաստությունը.

Հայ մանկավարժին պատրաստությունը կը հիմնուի լաւագոյն արհեստավարժական չափանիշներուն վրայ: Ամէն պատրաստութիւն ունի իր մթնոլորտը: Արհեստավարժութիւնը չի բաւարարուիր վկայականով ու գիրով: Մանկավարժը պատրաստող գետիներ բարդ է – կայ մանուկներու փոքր աշխարհը, կայ մարդկային քաղաքակրթութեան լայն պատմութիւնը, կայ հայկական մշակոյթի ու պատմութեան իւրայատուկ փորձը, կայ ամէն անհատ մանկավարժի եզակի ասպրումը:

4. Մանկավարժին դաշտը.

Ո՞րն է այսօր հայ մանկավարժին ծառայութեան դաշտը: Հայ դպրոցը, հայ տունն ու ընտանիշքը. Հայ եկեղեցին, հայատառ աշխարհը: Ո՞ր է հայրենի աշխարհագրութիւնը, ի՞նչ են հայ մանկավարժին մտքին մէջ դրոշմուած Հայաստան աշխարհի սահմանները: Ո՞րն է ներքին նուիրումի դաշտը, ո՞րն է արտաքինը: Ի՞նչ է հայկական կալուածին եւ ոչ-հայկականին առնչութիւնը: Ի՞նչ են հայ մանկավարժին ծառայութեան առիթները՝ աճման, գնահատանքի ու լայն աշխարհի հետ տիեզերական հաղորդակցութիւնը:

5. Մանկավարժին ընթացքը.

Մանկավարժը՝ իր վկայականով նախապատրաստուած է, բայց ոչ անպայման պատրաստուած: Իսկական պատրաստութիւնը աճում ու զարգացումի ընթացք է: Մանկավարժին ընթացքին մէջ ո՞ր է վարժութիւնը – ինչպիսին են մանկավարժին սովորութիւններն ու սովորոյթները: Ո՞ր է զանազանութիւնը բարիին ու չարին, օգտակարին ու վնասակարին, քրիստոնէականին ու հակա-քրիստոնէականին:


Ուսուցիչը, մանկավարժը, վարժապետը կը մշակէ մանկավարժի յատուկ կենցաղ, արժեքափ, եւ վարժութիւն:

Այս բոլորը, եւ ասոնց նման նիւթեր կը կազմեն առանցքը հայ մանկավարժի անձնական ու պաշտօնի աշխարհներու:

Բարի էրթ Հայ Մանկավարժին – որպէս անհատ եւ որպէս հատոր: Հայ մանկավարժը այն մանկավարժը չէ, որ պատահմամբ հայ է:

Հայ մանկավարժը այն հայը չէ, որ պարզապէս մանկավարժութեամբ կը զբաղի:

Հայ մանկավարժը որոշողն է, թէ հայ պիտի ըլլայ, եւ՝ ինչպիսին:



Անի Թորոսեան

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԿԵՑՈՒԱԾՔԸ՝ ԸՆԴԳՐԿՄԱՆ ՀԱՆԴԷՊ

Անի Թորոսեան Պաղտոյեան տոքթորայի թեկնածու եւ դասախօս է Օքլահոմայի համալսարանին մէջ (Ամերիկայի Միացեալ Նահանգներ): Ան ներկայիս կը ղեկավարէ համալսարանին կից գործող յատուկ բաժինը, որ կը զբաղի մանուկներու մօտ օթիզմի երեւոյթի ուսումնասիրութեամբ, ինչպէս նաեւ կ'ուսումնասիրէ արագ միջամտութեան դրուստները՝ մանուկներու մօտ վարուեցողական դժուարութիւններու պարագային: Ան մասնագիտական օգնութիւն կը տրամադրէ օթիզմի պարագայ ունեցող մանուկներու հետ աշխատող ուսուցիչներու եւ կը ղեկավարէ նոյն նպատակով ուսուցիչներու կազմաւորման ծրագիրներ: Տիկին Պաղտոյեան ունի աւելի քան 20 տարուայ ուսուցչական եւ դասախօսական փորձառութիւն՝ Լիբանանի եւ Միացեալ Նահանգներու հանրակրթական եւ համալսարանական հաստատութիւններու մէջ:



Այսօր ուսուցիչն է մը կ'ակնկալուի կերտել աշակերտներ եւ պատրաստել զանոնք՝ ապրելու բարդ աշխարհի մը մէջ: Առաւել՝ անկէ պահանջուած է, ակադեմական գերազանցութեան կողքին, պատասխանատու ըլլալ կարիքաւոր եւ տկար աշակերտներու պահանջներուն հանդէպ: Այս կէտերը պատճառ դարձած են ուսուցչակերտման ծրագիրներու հիմնական փոփոխութեան: Այսպիսով, անոնք այսօր յատուկ կարեւորութիւն կու տան պատրաստելու ուսուցիչներ՝ մարզելով զանոնք դասաւանդել ընդգրկակրթարաններէ (inclusive schools) ներս, այսինքն՝ անոնք պիտի կարենան կրթել բոլոր աշակերտները իրենց դպրոցներէն ներս:

Անցեալին կարիքաւոր աշակերտներուն մեծամասութիւնը կը յաճախէին յատուկ դպրոցներ: 1980-ական թուականներէն ի վեր կարգ մը ծնողներ եւ ուսումնագէտներ կը պահանջեն, որ անոնց տրամադրուի յաւելեալ ընդգրկածրագիրներ:

Ինչ է ընդգրկումը. ընդգրկումը կը ներկայացնէ ընդհանուր կրթարաններու (general schools) մէջ բազմակարող եւ կարիքաւոր աշակերտներու կրթասպասարկութիւններու նախապայմաններ՝ ներդասարանային յարմար աջակցութեամբ (*Շրթ, Մուրմըն եւ Ֆուլտոն*):

Ընդգրկումը կ'առաջարկէ, թէ բոլոր աշակերտները, առանց խտրութեան, մաս կազմեն նոյն դպրոցի միջավայրին, ուր պիտի ունենան պատկանելիութեան զգացումը, թէ՛ անոնք անդամ են նոյն հանրութեան, ինչպէս միւս աշակերտները եւ ուսուցիչները: Այս կարիքաւոր աշակերտին իրաւունքն է ըլլալ անդամ ընդհանուր կրթարանին (general school), մասնակցիլ անոր ընկերային եւ ուսումնական կեանքին եւ պատկանիլ այդ փոքր աշխարհին, ուր պիտի հանդիպի կեանքին տարբեր դիտանկիւններուն եւ կարծիքներուն, եւ որոնք պիտի օգնեն անոր՝ կերտելու զօրաւոր անձնաւորութիւն:

Ուսուցչին կեցուածքը

Յաջող ընդգրկման մը կարեւոր տարրերէն մէկն է ուսուցիչներու կեցուածքը: Կարգ մը ուսուցիչներ ունին դրական կեցուածք

ընդգրկման հանդէպ, սակայն մեծամասնութիւնը կը ցուցաբերեն ժխտական վերաբերում:

Ուսումնասիրութիւններու համաձայն՝ շատ մը ազդակներ կը ներգործեն ուսուցիչին կարծիքին վրայ: Ամէնէն ընդհանուր ազդակներն են՝

ա. ուսուցիչին ենթահողը.

բ. անոր փորձառութիւնները կամ շփումները կարիքաւոր աշակերտներու հետ, անոր անփորձառութիւնը այսպիսիներու հետ աշխատելու ընդհանրակրթարաններէ ներս.

գ. կարիքաւոր աշակերտներուն խեղութիւններու (disabilities) բնոյթը՝ հաշմանդամութիւն, թերաճում եւ այլն.

դ. ուսուցիչին սեռը (իգական կամ արական).

ե. դիտանկիւններու տարբերութիւնը տարբեր սերունդներու ընդհանրակրթական ուսուցիչներու միջեւ:

Ուսուցիչին ենթահողը

Այս առաջին ազդակի ազդեցութիւնը ուսումնասիրելու համար հարցաքննութեան ենթարկուած են 342 ուսուցիչ, որոնց 60 առ հարիւր ձախողութիւն ակնկալած են ընդգրկման ծրագիրին: Այս ուսումնասիրութեան համաձայն՝ ընդհանրակրթիչները չունին կարիքաւոր աշակերտներ դասաւանդելու անհրաժեշտ բանալիները եւ ոչ ալ անոնց կրթելու կրթական փորձառութիւն:

Անոնք կը նախընտրեն, որ այդպիսի աշակերտներ յաճախեն իրենց յատուկ վարժարաններ:

Այլ ուսումնասիրութիւն մը (2003-ին) 93 ուսանող ուսուցիչներէ քաղած է անոնց կեցուածքը կարիքաւոր աշակերտներու հանդէպ: Այն ուսուցիչները, որոնք անցեալին շփում ունեցած են այսպիսի աշակերտներու հետ, յայտնաբերած են ւելի դրական կեցուածք՝ բաղդատած անոնց հետ, որոնք նման փորձառութիւն չեն ունեցած:

2006 թուականին այլ ուսումնասիրութիւն մը կատարուած է Յորդանանի մէջ, որուն համաձայն՝ ուսուցիչները պէտք ունին յարատեւ մարզումի, մանաւանդ ուսուցիչ-ուսուցիչ յարաբերութեան,

անհատականացուած դասածրագիրներու, վարմունքի հովանա-
տրա-ծրագիրներու եւ ուսումնածրագրի ձեւափոխութեան ու
ընտելացման մարզերուն մէջ:

Խեղութիւններու բնոյթը

Այս վերջին ուսումնասիրութեան համաձայն, որ կ'ընդգրկէր 90
ուսուցիչներ, 69-ն պատրաստ էին աշխատելու այնպիսի աշա-
կերտներու հետ, որոնք կը տառապին ֆիզիքական խեղութիւննե-
րէ եւ ոչ թէ մտային թերաճումէ: Ուսանող ուսուցիչները, սակայն,
ունէին ժխտական կեցուածք զգացական եւ վարմունքի հարցեր
ունեցող աշակերտներու դասաւանդելու գաղափարին հանդէպ,
բայց ոչ՝ մտային հարցերէ տառապողներուն:

Ուսուցիչին սեռը

1985 թուականին կատարուած ուսումնասիրութեան մը համա-
ձայն՝ իգական սեռին պատկանող ուսուցիչները աւելի պատրաս-
տակամ են աշխատելու ընդգրկակրթավայրերու մէջ, քան
տղամարդիկ: Անոնք աւելի դրական կեցուածք կը ցուցաբերեն
ընդհանրակրթավայրերու մէջ կարիքաւոր աշակերտներու հա-
մախմբման հանդէպ:

Շատ մը այլ ուսումնասիրութիւններ կատարուած են այս ծիրէն
ներս: Անոնց արդիւնքներէն են հետեւեալները.

Ժամանակի ընթացքին ուսուցիչներ դրական կեցուածք կը ցու-
ցաբերեն, մանաւանդ երբ ընդգրկման կ'ընկերակցին նախապատ-
րաստութիւն, վարչական եւ այլ թիկունքներ, ինչպէս նաեւ ներդա-
սարանային օժանդակութիւն (1990):

Այն ուսուցիչները, որոնք փորձառութիւն ունին կարիքաւոր
աշակերտներու դասաւանդելու, աւելի նպաստաւոր դիրք կը ցու-
ցաբերեն այս նիւթին հանդէպ (1995):

Իսկ ընդգրկակրթարաններու փորձառու ուսուցիչներ աւելի
ժխտական կեցուածք կը ցուցաբերեն (1996):

Ընդգրկումը նոր արդիւնքներ չէ, որ կը յայտնաբերէ, այլ պար-
զապէս կ'ընդլայնէ կեցուածքներ, փիլիսոփայութիւններ եւ փոր-

ձարկումներ, որոնք արդեն գոյութիւն ունին դպրոցէն ներս ընդգրկումէն առաջ (1992):

Եւ վստահ, կարիքաւորներու յատուկ կրթարաններու ուսուցիչները աւելի աջակից են ընդգրկման, քան ընդհանրավարժարաններու ուսուցիչները (1991):

Յանձնարարութիւններ

Ուսուցիչները պէտք ունին օգնութեան, որպէսզի ձերբազատին իրենց վախերէն եւ դրական մօտեցում յայտնաբերեն ընդգրկման հանդէպ:

Համագործակցութիւն ընդհանրակրթական եւ յատուկ ուսման ուսուցիչներու միջեւ

Ընդհանրակրթական ուսուցիչները չունին անհրաժեշտ փորձառութիւնը եւ ոչ ալ միջոցները կարիքաւոր աշակերտներու դասաւանդելու: Ուրեմն կը թուի, թէ համագործակցութիւնը միակ պատասխանն է ընդգրկումը յաջող տարբերակ մը դարձնելու կարիքաւոր ու ընդհանրակրթարաններու աշակերտներուն եւ ուսուցիչներուն համար:

Այս համագործակցական մթնոլորտին մէջ իրաքանչիւր ուսուցիչ կը ներկայացնէ իր գիտութիւնը, փորձառութիւնն ու կարծիքները: Այս աղբիւրները միանալով կը զօրացնեն ուսմունքի հնարաւորութիւններն ու մեթոտները:

Արդիւնաբեր համագործակցութիւն մը անձնագոհութիւն կը պահանջէ ուսուցիչներու, տնօրէնութեան եւ հանրութեան կողմէ: Ան կը կարօտի ժամանակի, աջակցութեան, աղբիւրներու, հետետողութեան եւ ամենաշատը՝ յարատեւութեան: Սակայն ամենամեծ հարցը ժամանակն է՝ ժամանակ ծրագրելու, զարգացնելու եւ արժեւորելու: Համագործակցութիւնը պէտք է մաս կազմէ ուսուցչակերտման ծրագիրներուն: Իրաքանչիւր ուսուցիչ պէտք է սորվի կարիքաւորներու յատուկ դասաւանդամիջոցներ եւ տեղեակ ըլլայ խելութիւններու մասին:

Կարեւոր է ուսուցիչները ստանան ծրագրական եւ դասարանա-

յին աջակցութիւն: Անհրաժեշտ է նաեւ ծրագրման ժամանակ տրամադրուի ամբողջ կրթական տարեշրջանի ընթացքին:

Ուսուցչամարզման ծրագիրներ

Ուսումնասիրութիւններու համաձայն՝ նախապատրաստութիւնը մեծ դեր կը խաղայ ուսուցիչներուն ընդգրկումի հանդէպ կեցուածքի կազմաւորման: Ուրեմն ուսուցչակերտման ընթացքին հնարաւոր է անոնց հայթայթել կարիքաւոր աշակերտներու հետ աշխատելու փորձառութիւնը: Այսպիսի շօշափելի փորձառութիւններ կը բարելաւեն ուսուցիչներու կեցուածքը ընդգրկման հանդէպ: Գետնի վրայ աշխատանքներ, ինչպէս՝ խմբային ուսուցումը եւ կրթակցութիւնը (co-teaching) կը տրամադրեն օգտաշատ փորձառութիւն: Սակայն այսպիսի վարժութիւններ պէտք է իրագործուին միայն այնպիսի ուսուցիչներու կողմէ, որոնք այս ճիւղի մէջ ունին լայն փորձառութիւն, եւ տակաւին, անոնց կողմէ, որոնք խանդավարօրէն կը քաջալերեն ուսանող ուսուցիչներու մուտքը ընդգրկակրթական աշխարհէն ներս:

Այն ուսուցիչները, որոնք մարզուած են տարբեր դասաւանդամեթոտներ օգտագործելու, յաջողութիւն կը ցուցաբերեն մեծ թիւով աշակերտներու մօտ: Լաւ դասաւանդութիւնը ուսուցչակերտման հիմն է: Նախընտրելի է ուսուցչակերտման ընթացքին ուսուցիչները վարժեցնել չզանազանելու իրենց աշակերտները կարիքաւոր կամ թերաձ ածականներով, այլ աջակցին՝ անոնց իւրայատուկ պահանջներուն համեմատ, այսինքն՝ նկատեն իւրաքանչիւր աշակերտի կրթական եւ վարմունքային հարցերը ու կեդրոնանան անոնց սրբագրութեան վրայ:

Ընդհանրապէս ուսուցիչներ բաւարար փորձառութիւն չունին ընդգրկակրթասարաններէ ներս դասածրագիրներ բարեփոխելու, որպէսզի անոնք յարմարին աշակերտներուն տարբեր պահանջներուն: Ուրեմն անոնք կարիքը ունին վարիչ մարմիններու, կարիքաւորներու յատուկ ուսուցիչներու, ծնողներու, հոգեբոյժներու եւ բժիշկներու օժանդակութեան:

Ընտելացում եւ ձեւափոխութիւն

Կարիքաւոր աշակերտներուն մեծամասնութիւնը պէտք ունի ընտելական մեթոտներու, որոնք կ'օգնեն իրենց՝ մնալու իրենց դասակարգերուն մէջ: Իսկ ձեւափոխութիւնները անոնց համար են, որոնք չեն կրնար քայլ պահել իրենց տարիքի մակարդակի դասակարգերուն հետ:

Ընտելական մեթոտներ կամ յարմարութիւններ

Յարմարութիւններ կը ստեղծուին՝ փոփոխութեան ենթարկելով նիւթերու ներկայացման, աշակերտներու գիտութեան դրսեւորման եւ միջավայրի օժանդակութեան ձեւերը:

Յարմարութիւնները հիմնականօրէն չէ, որ կը փոխեն ուսումնածրագիրները, ոչ ալ կը նուազեցնեն ակնկալութիւնները կամ ուսուցման մակարդակաչափի բովանդակութիւնը կամ ներկայացումի չափանիշները: Յարմարութիւններու օրինակներէն են՝

ա. տեղեկութեան ներկայացում տարբեր ներդրումներով (գրաւոր, բերանացի),

բ. տեղեկութեան արտայայտութիւն զանազան արտածումներով (բերանացի, գրաւոր, մեքենագրուած, խաղերու միջոցաւ),

գ. կարճատեւ աշխատանքներ, երկար աշխատանքի ժամեր, յաւելեալ դադարներ,

դ. ուսուցիչի եւ դասընկերներու յաւելեալ աջակցութիւն,

ե. փոքր քանակով նիւթերու դասաւանդութիւն,

զ. միջավայրի փոփոխութիւններ (ուսուցիչին մօտ նստիլ, դասընկերներու հետ աշխատիլ)՝ խանգարիչներ պակսեցնելու եւ տարածք շահելու համար:

Յարմարութիւնները կ'օգնեն աշակերտին օգտուելու ուսումնածրագիրէն, մինչ ուսուցիչը կը ստուգէ թէ ան սորված է նիւթը, թէ ոչ:

Ձեւափոխութիւններ


Ձեւափոխութիւնները բովանդակութեան, մակարդակի, ակնկալութիւններու եւ այլ ազդակներու փոփոխութիւններ են, որոնք կա-

րիքաւոր աշակերտուն առիթ կու տան դասապահերուն մասնակցելու:

Ձեաւփոխութիւնները հիմնականօրէն կը փոխեն ուսումնածրագիրները, որպէսզի յարմարին աշակերտներուն պահանջներուն: Բոլոր նիւթերը ձեաւփոխութիւններ չեն պահանջեր: Ձեաւփոխութիւններու ծրագիրին ենթարկուած աշակերտը տարբեր ձեւով կ'արժեւորուի: Ան չի կրնար գրել, կարդալ կամ թուաբանական խնդիրներ լուծել միւս աշակերտներուն պէս. ուրեմն անոր կը ներկայացուի միեւնոյն նիւթը, սակայն աւելի ցած մակարդակի բացատրութեամբ եւ վարժութիւններով: Երբ աշակերտները շարադրութիւն կը գրեն, անկէ կը պահանջուի գրել միայն մէկ պարբերութիւն: Թուաբանութեան պահուն անոնք կ'աշխատին օրէնքը հասկնալու համար, մինչ միւսները խնդիրներ կը լուծեն: Ան կը կարդայ նոյն պատմութեան խտացուած, դիւրին բառերով տարբերակը: Ան իր դասընկերներէն տարբեր քննութիւններ կու տայ:

Եզրակացութիւն եւ ամփոփում


Այսօր ընդգրկումը արդէն առաջնագիծի վրայ է. ուրեմն հնարաւոր է ուսումնասիրել ուսուցիչներուն կեցուածքը այս նիւթին հանդէպ: Ուսուցչամարզման ծրագիրները պէտք է վերագնահատուին սահմանելու համար անոնց արդիւնաւէտութիւնը, կարիքաւոր աշակերտներու զանազան պահանջները գոհացնելու մէջ: Այդ ծրագիրները պէտք է յաճախ վերատեսութեան ենթարկուին եւ քայլ պահեն գիտութեան զարգացման հետ: Ընդհանրակրթիչները նշանակալից ներդրում ունին կարիքաւոր աշակերտներու ուսման արդիւնքներուն վրայ: Անոնց յարաբերութիւնը կարիքաւորներու յատուկ ուսուցիչներուն հետ՝ վստահութիւն կը ներշնչէ անոնց՝ այսպիսի աշակերտներու ծառայելու: Ընդհանրակրթարաններու ուսուցչակերտման ծրագիրները պէտք է սորվեցնեն կարիքաւորներու դասաւանդամիջոցներ, անոնց յատուկ մարկավարժական մօտեցումներ եւ համագործակցաբար դասաւանդելու մեթոտներ: Կարեւոր է ընդհանրակրթարաններու ուսուցիչներուն եւ անձնակազմին տրամադրել մարզում եւ խորհրդատուութիւն, որպէսզի



անոնք կարենան աշխատիլ կարիքաւոր աշակերտներուն հետ: Որպէսզի ուսուցիչները կարենան ընդունիլ կարիքաւոր աշակերտներ իրենց դասարաններէն ներս, անհրաժեշտ է անոնց բացատրել զանազան անկարողութիւններու վարմունքի հետեւանքները եւ տրամադրել ճշգրիտ ակադեմական ու վարմունքի միջամտութեան մօտեցում:

Եզրափակում

Շատ մը հարցեր պէտք է լուծուին, որպէսզի կարենան բոլոր ուսուցիչները դասաւանդել բոլոր աշակերտներուն: Մինչ բազմաթիւ են խոչընդոտները, ուսումնասիրութիւններ լուծումներ կը գտնեն, եւ յոյս կայ, որ մօտ ապագային բոլոր ընդհանրակրթարաններէ ներս պիտի ծառայեն ուսուցիչներ, որոնք կարող են դասաւանդել բոլոր աշակերտներուն:



Շաղիկ Խիտավերտեան

ՆԵՐՄՂՈՒՄ

Շաղիկ Խիտավերտեան հոգեբանութեան եւ մանկավարժութեան դասախօս է: «Հայ Մանկավարժ»-ի առաջին համարին մէջ (Ձմեռ 2010 - թիւ 1) հրատարակուեցաւ անոր յօդուածը՝ «Մանուկ պատանիներու ընկերային կազմաւորումը» վերնագրով:



Իբրեւ ուսուցիչ, անկախ մեր դասաւանդած նիւթէն եւ դասարանային կարգէն, մեր հիմնական նպատակակէտերէն մէկը՝ աշակերտը շինիչ եւ արդիւնաւէտ ձեռով զբաղ պահելն է: Այս նպատակակէտին իրագործման համար նկատի պէտք է ունենալ կարգ մը ազդակներ, որոնց հեզասահ ընթացքը կ'երաշխաւորէ աշակերտին գործուն մասնակցութեան ապահովումը.

ա. դասի նպատակակէտերու յստակ ծշդում,

բ. մանկավարժական տարբեր տեսութիւններու վրայ հիմնուած գանազան ձեւի անհատական կամ խմբական աշխատանքներու բաժանում,

գ. նիւթի հետաքրքրաշարժ ձեռով արծարծում,

դ. համակարգիչի եւ լսողա-տեսողական միջոցներու օգտագործում եւ տեղեկութիւններու ամբարման ու հմտութիւններու ձեռքբերման հոլովոյթներու բացատրութիւն եւ աշակերտի մասնակցութեան ներառում:

Հակառակ այս բոլորին՝ ուսուցիչը ինքզինք դէմ յանդիման կը գտնէ միշտ նոր, աւելի հետաքրքրական ձեւեր օգտագործելու պահանջին: Եւ հոս է, որ որոշիչ դեր կը խաղան ուսուցիչին կողմէ աշակերտին ներմղում տալու, անոր մէջ խայծ արթնցնելու փորձերն ու այդ փորձերուն յաջողութիւնը:

Ուրեմն ի՞նչ է ներմղումը (motivation):

Ներմղումը կ'ընդգրկէ այն բոլոր ազդակները, գործօնները, որոնք կը բացատրեն եւ որոնց կարելի է վերագրել որեւէ վարմունքի, արարքի սկիզբը, անհատին կողմէ անոր ընտրութիւնը, ստացած արդիւնաւէտ ուղղութիւնն ու շարունակութեան ապահովումը: Այս սահմանումին մէջ նաեւ նկատի պէտք է ունենալ, որ չկայ աշակերտ մը, որ մղում չունենայ: Կրնայ ըլլալ, որ անոր թափած ծիգը անբաւարար է, նիւթով հետաքրքրուած չէ, բայց չկայ ոեւէ անհատ, որ մղումէ զուրկ է:

Հակառակ այս իրողութեան եւ հակառակ ուսուցիչին բոլոր ձիգերուն՝ դասարանը գրաւիչ դարձնելու, գնահատական տալու, աշակերտին կարիքներու արտայայտման եւ գոհացման առիթ ընծայելու, կան կարգ մը աշակերտներ, որոնք կը շարունակեն ան-

տարբեր մնալ, մղում է զուրկ թուիլ եւ ոչ մէկ հետաքրքրութիւն ցուցաբերել սորվելու եւ աշխատելու նկատմամբ:

Ինչո՞ւ: Ինչ կարելի է ընել: Կան կարգ մը գործօններ, որոնք կը նպաստեն աշակերտը սորվելու մղելու եւ կամ, ընդհակառակն, զայն կը հեռացնեն սորվելու ընթացքէն. անոնք են՝

ա. տրուած գործին, աշխատանքին բնոյթը եւ ներկայացման ձեւը (մատչելի՞, թէ խրթին, հետաքրքրաշարժ, թէ անհրապոյր),

բ. աշակերտներու անհատական յատկանիշները եւ կարողականութիւնները (տրամադրութիւն, մասնակցութեան ոգի, ինքնահամարումի զգացում, դժուարութիւններու կամ հարցերու մօտեցման եղանակ),

գ. դասարանի մթնոլորտ (հանդարտ ու խաղա՞ղ, թէ պրկուած. քաջալերակա՞ն, թէ ջլատող. գործակցութիւն թէ մրցակցութիւն),

դ. ուսուցիչին անհատականութիւնն ու հաղորդակցութեան կամ մօտեցման եղանակը (խանդավառ, հասկցող, համակրելի, կազմակերպուած, հանդարտ, թէ ջղագրգիռ, անկազմակերպ, ծանծրացուցիչ եւ անտարբեր):

Վերոնշեալ կէտերու թումէն ետք հարկ է մտածել, թէ ի՞նչ պէտք է ընել, որպէսզի կարելի ըլլալ դասարանային աշխատանքին մէջ աշակերտին մասնակցութիւնը ապահովել:

Ներմղումը ուսուցանելու-սորվելու գործընթացի նպատակակէտերէն մէկը պէտք է ըլլայ, որովհետեւ պիտի ուզէինք, որ մեր աշակերտները հետաքրքրուած ըլլան մտաւորական, ուսումնական, ակադեմական եւ մշակութային աշխատանքներով եւ այդպէս ալ մնան դպրոցական շրջանի ասարտէն ետք:

Նման նպատակակէտ դառնալէ անկախ՝ ներմղումը նախ միջոց է, որ կ'երաշխաւորէ աշակերտներու հասկացողութեան եւ հմտութիւններ ձեռք ձգելու յաջողութիւնը: Ներմղում ունեցող աշակերտները աւելի արդիւնաւէտ ձեւով կը սորվին, դասարան չեն խանգարեր, կը մասնակցին, գիտելիք կ'իւրացնեն, այլ խօսքով՝ կը յաջողին:

Առ այդ, մանկավարժներ եւ հոգեբաններ կ'առաջարկեն հետեւեալ ձեւերն ու միջոցները.

ա. նիւթը հետաքրքրական, օգտակար եւ իմաստալի դարձնել, հեռու մնալ ձանձրացուցիչ ոճէ, դասաւանդման միատեսակ եղանակէ, նոյնանման վարժութիւններէ: Փորձել բազմատեսակ աշխատանքներ ծրագրել եւ կիրարկել. խումբերով աշխատիլ, այցելութիւններ տալ, դասարանի յարդարումը միշտ փոխել, կեանքին առնչուող օրինակներ տալ, անոնց կարծիքները լսել ու ազատ, անկաշկանդ ձեռով արծարծել:

բ. Աշակերտներու վարուելակերպի դրական փոփոխութեան համար տարբեր ձեւեր օգտագործել, բերանացի գովասանք գործածել, յարատետող ճիգը գնահատել, գործակցութեան ոգին քաջալերել, բաղդատական գնահատականներէ խուսափիլ, դրականը տեսնել ու գնահատել:

գ. Որեւէ աշխատանքի բնոյթը, նպատակն ու ընթացքը յստակացնել, աշակերտին բացատրել ինչո՞ւն, ինչպէ՞սը, ե՞րբը՝ իւրաքանչիւր դասի կամ նպատակակէտի վերաբերող:

դ. Աշակերտի անհատական տարբերութիւնները ընդունիլ եւ անոնց նկատմամբ դրական կեցուածք որդեգրել. այս կէտը կը վերաբերի անոնց կարողութիւններուն, ընտանեկան միջավայրերուն ու հոն ընձեռուած կարելիութիւններուն (կամ անոնց չգոյութեան), դպրոցի եւ դասի հանդէպ անոնց տրամադրութիւններուն, զգացումներուն, հեռանկարներուն եւ ձգտումներուն (կամ այս բոլորին բացակայութեան):

ե. Աշակերտներու տարբեր կարիքներուն գոհացում տալ. ֆիզիքական հանգիստը ապահովել, արժանապատուութեան զգացումը անխաթար պահել, քաջալերուած զգալու եւ յաջողելու պահանջը գոհացնել, ուսուցիչի կողմէ ուշադրութեան եւ գուրգուրանքի արժանացնել, դրական ինքնապատկերի կազմութեան եւ իրագործումի զգացումի ձեռքբերումին նպաստել:

զ. Գրաւոր թէ բերանացի ստուգուումներու արժեւորման արդար եղանակ օգտագործել՝ առարկայական գնահատական կատարելու եւ ոչ պատժելու համար. բացատրել աշակերտին, թէ իր ստացած գնահատականը զարգացման ուղեցոյց է եւ ոչ զինք ուրիշներու հետ բաղդատելու գործիք եւ կամ մտային անկարողու-

թեան ցուցանիշ:

է. Երբեմն անակնկալն ու անսպասելին կատարել. ակնկալուածէն տարբեր՝ հետաքրքրական ձեռով բան մը ընելը կը գրաւէ աշակերտին ուշադրութիւնը եւ զայն կը ներգրաւէ աշխատանքի մէջ:

Այս բոլորը կը նպաստեն ուսուցիչ-աշակերտ մարդկային յարաբերութեան առողջ կազմաւորման: Եւ այս կազմաւորման մէջ՝ ներմղումի էական դերին: Ի վերջոյ եթէ մենք՝ իբրեւ ուսուցիչներ, կարենանք այս յարաբերութեան դրական ընթացք ապահովել եւ զայն անմիջական, անկեղծ ջերմ ու յարգալիր դարձնել, մեր աշակերտներուն մօտ ներմղումի ստեղծման առաջին հաստատ քայլը արդէն իսկ առած կ'ըլլանք:

Աւարտենք կարճ պատմութեամբ մը, որուն թելադրականութիւնը ինքնին խօսուն է.

Համալսարանի դասախօս մը օր մը հարկադրաբար ստիպուած կ'ըլլայ բացակայիլ դասէն. եւ որպէսզի դասի ծրագիրը չկաղայ, այդ օրուան դաս դասախօսութիւնը կ'արձանագրէ ձայներիզի մը վրայ եւ կը դրկէ դասարան, ուր աշակերտները, ձայներիզը ունկնդրելով, այդ օրուան դասը կ'ամբողջացնեն:

Յարմար լուծում մը գտած ըլլալու գոհունակութեամբ՝ դասախօսը, ամէն անգամ որ ստիպուած ըլլայ բացակայիլ, դասերը կը պատրաստէ ձայներիզին վրայ եւ կը դրկէ դասարան: Օր մըն ալ, գործը կանուխ լրացնելով, կ'անդրադառնայ, որ կրնայ դասի վերջին կէս ժամուն համար հասնիլ դասարան: Միջանցքին մէջ՝ դասարանի փակ դրան առջեւ կանգ կ'առնէ եւ ժպիտով ու հրճուած կը լսէ իր իսկ ձայնը անաղմուկ դասարանին մէջ եւ կը հիանայ ներսը գտնուող իր աշակերտներու ուշադիր կեդրոնացումին վրայ... դուրը կը բանայ ու կը տեսնէ, որ ուսուցիչի սեղանին վրայ սփռուող ձայներիզին դիմաց իւրաքանչիւր աշակերտի գրասեղանին ետին աշակերտ չկայ, այլ անոնց վրայ կան ձայնագրումի ժապաւէններ...


Առանց ուսուցիչի... առանց աշակերտի... դասը կը շարունակուի...



ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

ԱՂԱԻՆԻ ՖՍՏԸԳՃԵԱՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ.
«ԻՄ ԵՐԱԶՍ ԷՐ ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏԻՆ ՍԻՐԵԼ
ՏԱԼ ԻՐ ՀԱՅԵՐԷՆԻ ԳԻՐՔԸ
ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՔՈՎ,
ԵՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ»

Աղանի ֆստրգճեան-Առաքելեան աարտած է Համազգայինի հա-
յագիտական բարձրագոյն հիմնարկը, որմէ ետք ստացած է դպրո-
ցավարութեան մագիստրոսի աստիճան Երեւանի պետական հա-
մալսարանէն: Ան երկար տարիներէ ի վեր կը պաշտօնավարէ Մ. Եւ
Հ. Արսլանեան ծեմարանին մէջ:



Վերջերս Ա. Ֆստրգճեան-Առաքելեան հրատարակեց «Չորս եղանակ» խորագիրով դասագիրք մը, որ նպատակ կը հետապնդէ հայերէն գրել-կարդալ սորվեցնել հայ աշակերտին: Ըստ Ա. Ֆստրգճեան-Առաքելեանի՝ հայ աշակերտը հայ լեզուին կապելը ամենադժուրին կէտն է մեզի՝ մանկավարժ-ուսուցիչներուս, որովհետեւ հայ փոքրիկին լեզուամտածողութիւնը հայերէնն է. ուստի մեզի կը մնայ շահեկան եւ հետաքրքրական դարձնել մեր դասապահերը: Ան անհրաժեշտ կը համարէ, որ հայերէնի պահուն աշակերտը արտայայտուի, մանաւանդ ճիշդ արտայայտուի: Աղանի Ֆստրգճեան-Առաքելեան «Հայ Մանկավարժ»-ին մաղթեց յարատեւութիւն, ճոխ հրատարակութիւն եւ յոյսերու իրականացում:

Ստորեւ ամբողջութեամբ կը ներկայացնենք Աղանի Ֆստրգճեան-Առաքելեանի հետ կատարուած հարցազրոյցը, զոր կատարեց լրագրող, ուսուցչուհի Մարինա Համամճեան:

ՀՄ.- Խօսեցէք «Չորս եղանակ» դասագիրքին մասին: Լեզուի ուսուցման, դասերու բաժանման, դասարանային եւ տնային աշխատանքներու ինչ սկզբունքներ կիրարկուած են անոր պատրաստութեան մէջ:

ԱՖ.- «Չորս եղանակ»-ը «Դիւրին Հայերէն» մատենաշարին առաջին դասագիրքն է՝ վարժութեան երկու տեսակներով ամբողջացած: Նախապէս ամուսինս եւ ես պատրաստած ենք քերականութեան գիրքեր: Ամէն դասագիրքի նման «Չորս եղանակ»-ին նպատակն է հայերէն գրել կարդալ սորվեցնել հայ աշակերտին, հարստացնել անոր բառապաշարը, ընդհանուր գիտելիքները, ինչպէս նաեւ հայերէն մտածելու տարբեր եղանակներ սորվեցնել անոր: Դասագիրքին գլխաւոր նիւթերը ընտրած եմ՝ հիմնուելով փոքրիկներու աշխարհին եւ անոնց հետաքրքրութեան վրայ. միեւնոյն ժամանակ փորձած եմ որոշ զուգահեռ մը գծել օտար լեզուներու դասագիրքերու կեդրոնական նիւթերուն հետ:

Գիրքը բաղկացած է 9 կեդրոնական նիւթերէ: Իրաքանչիւր կեդրոնական նիւթ կ'ընդգրկէ՝

- Մէկէ աւելի չափածոյ գործեր:

- Քանի մը արձակ գրութիւն: Նախատեսած են, որ ուսուցիչը կատարէ յարմար ընտրութիւնը եւ, իբրեւ դաս, զատէ մէկ չափածոյ ու 1-2 արձակ՝ ըստ ժամանակի յարմարութեան:

- «Ազատ ընթերցում»,

- Քերականութեան տեսական բաժին, որ երբեք չի հետաքրքրեր փոքրիկը, այս բաժինը ուսուցիչին եւ մանաւանդ աշակերտին ծնողքին (կամ դասը սորվեցնողին) համար է:

- «Ժամանց»: Այս վերնագիրին տակ կը գտնենք ձեռային աշխատանքներ, խաղեր, խոհագիրներ եւ այլն:

- Հանելուկներ, շուտասելուկներ եւ այլազան գիտելիքներ:

Դասին բացատրութիւնը կը տրուի դասարանին մէջ ուսուցիչին օգնութեամբ: Աշակերտները ուսուցիչին առաջնորդութեամբ կը գտնեն պատասխանները եւ կը հասնին տեսական բաժինին: Դասին բացատրութենէն՝ սեւագրութեան տետրակին մէջ եւ գրատախտակին վրայ աշխատելէ ետք աշակերտը կը շարունակէ աշխատիլ տետրակին մէջ: Վարժութիւնները շատ են եւ այլազան. պայման չէ, որ տետրակին բոլոր վարժութիւնները կատարուին: Երբ աշակերտը ընկալէ նպատակակէտը, ուսուցչուհին կը յանձնարարէ 1-2 վարժութիւն՝ իբրեւ տնային աշխատանք: Պէտք է աշակերտը տնային աշխատանքը առանձինն կատարէ եւ անսխալ: Այս բոլորէն ետք է, որ կը հասնի ստուգման ժամանակը:

Դասերու բացատրութիւնը եղած է դիւրինէն դժուար, ընդհանուրէն՝ մասնակի:

ՀՄ.- Ի՞նչը մղեց ձեզ, որ պատրաստէք հայոց լեզուին նուիրուած այս դասագիրքը:

ԱՖ.- Հայ աշակերտին հոգիին մէջ հայերէնի սէրը արմատացնելու նպատակը եւ մանկավարժական հին ու նոր մօտեցումներու լաւագոյն աշխատելաձեւերու կիրարկումը մղեցին զիս պատրաստելու այս դասագիրքը: Իմ փափաքս էր գունագեղ, գեղեցիկ նկարներով, բաւականին մեծ չափի տառերով եւ յստակ բաժա-

նումներով գիրք մը դնել հայ աշակերտին տրամադրութեան տակ: Երազս էր հայ աշակերտին սիրել տալ իր հայերէնի գիրքը եւ արտաքին տեսքով, եւ բովանդակութեամբ: Հոս առիթը կ'օգտագործեմ շնորհակալութիւն յայտնելու էջադրողին՝ Նորա Բարսեղեանին, որ մեծ համբերութեամբ կիրարկեց բոլոր խնդրանքներս (տողադարձ չդնել, յստակ բաժանումներ կատարել եւ այլն):

ՀՄ.- Ի՞նչ են գլխաւոր դժուարութիւնները, որոնց կը բախին ուսուցիչները հայ լեզուի ուսուցման աշխատանքներուն ընթացքին:

ԱՖ.- Հայ ուսուցիչը միշտ ամենատանջուող ուսուցիչն է. հայեցի դաստիարակութիւն, ձեռնարկներու պատրաստութիւն, պտոյտներու կազմակերպում, մրցանքներու պատրաստութիւն... Այլ խօսքով՝ բազմատեսակ գործեր հայ ուսուցիչին համար: Իսկ երբ կարգը կը հասնի հայերէնին, հայոց պատմութեան եւ հայեցի դաստիարակութեան, այլ նիւթերու պատրաստ աղբիւրներ կամ օժանդակ գիրքեր գրեթէ չենք գտներ: Հայերէնի ուսուցիչը ինք պիտի գտնէ նիւթը, ինք պիտի պատրաստէ ազատ ընթերցումի նիւթը, վարժութիւնները, խաղերը, հանելուկները, ձեռային աշխատանքները... Մինչդեռ տարբեր լեզուներու պարագային ամէն տեսակի աղբիւր եւ օժանդակ գիրք, միջոց (ծայներիզ, ֆիլմեր, երգեր...) այնքան մեծաթիւ են, որ ուսուցիչը ընտրելու դժուարութեան առջեւ կը գտնուի:

ՀՄ.- Ի՞նչ դժուարութիւններու հանդիպեցաք գիրքի պատրաստութեան աշխատանքներուն ընթացքին:

ԱՖ.- Գիրքի պատրաստութեան ժամանակ, բնականաբար, քիչ առաջ նշած դժուարութիւնները ունեցայ: Անշուշտ նկատի ունենալով, որ պատրաստածս դասագիրք էր, պատասխանատուութիւնը ւաւելի ծանր էր: Քերականութեան տեսական բաժիններու պատրաստութիւնը՝ պարզ եւ ճշգրիտ ձեւով, բառերու բացատրու-

թիւնը՝ ընդունելի եւ պարզ ձեով, արեւմտահայերէն մանկապատանեկան գրականութեան ոչ շատ հարուստ պատկերը բաականին մեծ դժուարութեան առջեւ դրին զիս:

ՀՄ.- Իբրեւ հայոց լեզուի ուսուցչուհի եւ մանկավարժ՝ ձեր կարծիքով՝ արհեստագիտութեան գերզարգացման այս օրերուն նոր սերունդը գրաւելու համար ի՞նչ միջոցներով կամ ձեւերով պէտք է դասաւանդել հայոց լեզուն: Ընդհանրապէս ի՞նչ պէտք է ընել զարգացնելու համար հայ լեզուի ուսուցումը դպրոցէն ներս:

ԱՖ.- Կարծիքս այն է, որ հայ աշակերտը հայ լեզուին կապելը, հայերէնի դասապահը հետաքրքրական դարձնելը ամենադիւրին կէտն է մեր գործին: Նկատի ունենալով, որ հայ աշակերտը այդ պահուն կ'արտայայտուի իր մայրենի լեզուով եւ նկատի ունենալով, որ ան շատ դիւրաւ կ'արտայայտէ իր միտքը՝ հարցումներ, պատասխաններ, հարցադրումներ... Ան ինքնաբերաբար շատ կը սիրէ հայերէնի դասապահը: Մեզի՝ ուսուցիչներուս, կը մնայ դրուագներով, նկարներու ցուցադրութեամբ, ներկայացման փորձերով, խաղերով, power point-ի, համակարգիչի եւ այլ գործիքներու ընձեռած դիւրութիւնները օգտագործելով՝ շահեկան եւ հետաքրքրական դարձնել մեր դասապահերը: Շատ կարեւոր է, անշուշտ, որ հայերէնի պահուն աշակերտը արտայայտուի եւ ճիշդ արտայայտուի: Հայ աշակերտին կը սորվեցնենք օտար լեզուն. հայերէնի պարագային բերանացի եւ գրաւոր սխալ արտայայտութիւնն է, որ պիտի սրբագրենք, ինչ որ շատ անելի դժուար է, քան օտար լեզու մը սորվեցնելը:


ՀՄ.- Ինչի՞ մէջ կը կայանայ հայ լեզուի կարեւորութիւնը ձեր ստանձնած դասարաններու հայ աշակերտներուն համար:

ԱՖ.- Վարի՛ ցած դասարաններուն մէջ մայրենի լեզուի կարե-

տրությունը վիճելի հարց չէ: Հայ փոքրիկը հայերէն կը մտածէ, հայերէն կ'արտայայտուի, հայերէնը լաւ կը հասկնայ. կարելի է ըսել նոյնիսկ, որ անոր զգացումները «հայկական» են: Հայերէնը հիմքն է հասկացողութեան. թուաբանութեան, գիտութեան, պատմութեան պարագային ան հայերէն կը մտածէ. իրատունք չունինք մեր փոքրիկները չարչարելու, որպէսզի անոնք օտար լեզուով դասաւանդուած նիւթի մը (թուաբանութիւն, գիտութիւն...) նախ բառամթերքը հասկնան (եթէ հասկնան), ապա՝ նպատակները: Հայ փոքրիկին լեզուամտածողութիւնը հայերէնն է. ջարդ գործելու պէտք չունինք: Երբ մայրենի լեզուով ներկայացուածը հասկնայ, օտար լեզուով ալ կրնայ պէտք եղածը հասկնալ ժամանակի ընթացքին:

ՀՄ.- Ինչպէս կը կարելորէք «Հայ Մանկավարժ»-ին կամ ընդհանրապէս մանկավարժական մամուլին դերը հայ դպրոցին եւ հայ լեզուի զարգացման գործին մէջ:


ԱՖ.- Մաղթանքս է, որ «Հայ Մանկավարժ»-ը գոյատեւէ եւ իրականացնէ իր վրայ դրուած յոյսերը: Բոլորիս օգտաշատ են հայերէնով գրուած յօդուածները արդի մանկավարժութեան մասին: Մեծ հետաքրքրութեամբ կարդացի «Հայ Մանկավարժ»-ի առաջին թիւը: Մանկավարժութեան նման պարբերաթերթի մը գոյութիւնը անհրաժեշտութիւն դարձած էր վաղուց: Յոյս ունիմ, որ ոչ միայն ուսուցիչները, այլ նաեւ ծնողները եւ բարձր դասարաններու աշակերտները կը դառնան մնայուն ընթերցողները այս պարբերաթերթին: Ձեզի յաջողութիւն, համբերութիւն եւ յարատեւութիւն կը մաղթեմ:



Քէն Շոր

ԻՆՉՊԷՍ ԿԱՆԽԱՐԳԻԼԵԼ
ՕՐԻՆԱԶԱՆՑՈՒՄԸ՝ ԴԱՍԻ ԳՐԱԻՈՐ
ՔՆՆՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ

Քէն Շոր հոգեբանական գիտություններու դոկտոր է, հեղինակ՝ 6 մենագրություններու: Մօտ 30 տարի ծառայած է որպէս դպրոցի հոգեբան՝ ամերիկեան դպրոցներու մէջ, եղած է ամերիկեան դաշնային եւ նահանգային կրթական մարմիններու անդամ եւ խորհրդատու, կ'աշխատակցի դպրոցական հոգեբանութեան նուիրուած միջազգային առաջատար հրատարակություններու:



Handwritten notes on the small piece of paper:

Handwritten notes on the small piece of paper:

Handwritten notes on the small piece of paper:

Handwritten notes on the larger sheet of paper:

Handwritten notes on the larger sheet of paper:

Handwritten notes on the larger sheet of paper:

Թէեւ գրաւոր ստուգման ընթացքին օրինազանցումը (cheating) աւելի յաճախակի է միջնակարգի եւ երկրորդականի աշակերտներու մօտ, այսուհանդերձ արտասովոր երեւոյթ չէ նախակրթարանի աշակերտներու մօտ ալ:

Դպրոցի մէջ ակադեմական լաւ արդիւնք ձեռք ձգելու ճնշումը հիմնական պատճառներէն մէկն է այս երեւոյթին, ուր կարելի է դերակատարութիւն ունին մանկավարժներ, մանաւանդ նախակրթարանի դասարաններուն մէջ:

Ինչո՞ւ:


Նախակրթարանի ուսուցիչը հիմնական ու բանալի դերակատարութիւն ունի հոս, որովհետեւ ինքն է, որ փոքր տարիքէն աշակերտին կը փոխանցէ պարկեշտութեան կարելորութիւնը եւ կ'օգնէ անոր՝ ըմբռնելու աշխատանքի արդար վարձատրութիւնը ստանալու հպարտութիւնը:

Առ այդ, կարելի է փոքր աշակերտներուն բացատրել, թէ ինչ է օրինազանցութիւնը գրաւոր ստուգման ընթացքին: Այս տարիքի փոքրիկները երբեմն կրնան խմբային աշխատանք տանիլ եւ իրարմէ ընդօրինակել որոշ գիտելիքներ: Պէտք է յստակօրէն զատորոշել այս երկու տեսակի ընդօրինակութիւնները եւ պարզաբանել անոնց տարբերութիւնը:

Ինչպէս կրնանք կանխարգիլել կամ նուազագոյնի հասցնել այս երեւոյթը:

Նախ եւ առաջ պէտք է խօսիլ այսօրինակ օրինազանցութեան մասին՝ յստակացնելով մեր քաղաքականութիւնը եւ օրինազանցութեան հետեւանքները: Քաջալերել աշակերտները խօսելու այս նիւթին շուրջ, բացատրուելու, թէ անոնք ինչ կը զգան, երբ լաւ գնահատական ստանան՝ իբրեւ արդիւնք իրենց արդար աշխատանքին, համեմատած այն լաւ գնահատականին, զոր ստացած են իբրեւ արդիւնք ընկերոջմէ մը ընդօրինակած գիտելիքներու: Հարցնել աշակերտներուն, թէ ինչո՞ւ կ'ուզեն ընդօրինակել գիտելիքներ այլ անձէ մը եւ ինչ կը զգան, երբ լսեն, թէ իրենց շատ սիրելի անձ մը նմանօրինակ բան ըրած է:

Օրինազանց աշակերտին կրելիք հետեւանքներու մասին բա-



ցատրութեան զուգահեռ՝ պէտք է նաեւ իրենց նկատողութեան յանձնել, թէ անոնք կրնան սխալ պատասխաններ ընդօրինակել: Հոս կարելի է յիշեցնել, որ եթէ անոնք կը փորձեն ընդօրինակել, որովհետեւ դասանիւթը ընկալելու դժուարութիւն ունին, մենք՝ որպէս ուսուցիչ, ներկայ ենք՝ իրենց յաւելեալ օգնութիւն հայթայթելու համար:

Նախքան ստուգման սկսիլը, բացատրել օրէնքները, գրասեղանները մաքրել թելադրել, դէմքերը, այսինքն՝ հայեացքները առաջ, աչքերը՝ թողթերուն վրայ, լուռ նստած մնալ մինչեւ ստուգման վերջաւորութիւնը:


Կարելի է այս օրէնքները մինչեւ իսկ ունենալ ցուցատախտակին վրայ եւ յիշեցնել անոնց օրինազանցութեանց վնասները:

Դասարանի մէջ որոշ փոփոխութիւններ յառաջացնել՝ իրարմէ ընդօրինակելու կարելիութիւնը նուազեցնելու համար: Սեղանները իրարմէ հեռացնել, որոշ արգելքներ ստեղծել՝ իրարու թուղթ տեսնելու առիթը կանխող:

Նոյն գրաւորի տարբեր օրինակներ տալ աշակերտներուն: Այս մէկը այսօր շատ դիւրին է համակարգիչի շնորհիւ: Կրնանք նոյն հարցումներուն միայն շարքը փոխել կամ պարզապէս Ա, Բ, Գ պիտակով այն տպաւորութիւնը ձգել, թէ անոնք տարբեր գրաւորներու վրայ կ'աշխատին: Այս բոլորը պիտի օգնեն, որ անոնք չքաջալերուին՝ իրարմէ ընդօրինակելու:


Երբ ստուգման հարցումները կ'ըլլան այնպէս, որ աշակերտը պարտաւորովի բացատրութիւն տալ իր տուած պատասխանին մասին, ընդօրինակելու հաւանականութիւնը կը նուազի: Այս պարագային, նոյնիսկ եթէ աշակերտը որպէս վերջնական պատասխան սխալ տեղեկութիւն տուած է, կրնայ օգտուիլ իր տուած բացատրութիւններու համար ստանալիք նիշէն:

Փորձել աշակերտներուն հսկել դասարանի ետեւի մասէն: Երբ աշակերտները զգան, թէ իրենց կը հետեւինք, աւելի նուազ չափով պիտի փորձեն չորս դին նայիլ: Երջիլ իրենց միջեւ անսպասելի անցումներով՝ միշտ աչքի տակ ունենալով մանաւանդ այն աշակերտները, որոնք անցեալին օրինազանցութիւն կատարած են:



Այս բոլորը որոշակի քայլեր են, որոնք կրնան օգնել ուսուցիչին՝ ապահովելու գրաւոր ստուգման ընթացքին հանդարտ վիճակ մը, ուր աշակերտները կ'աշխատին ինքնուրոյն՝ իրենց կեդրոնացումը պահելով միայն իրենց աշխատանքին վրայ:

Անգլերէնէ թարգմանութիւնը՝
Եւա Գորէսեանի



Կարո Առաքելեան

ՊԱՀՊԱՆԵՆՔ ՄԱՅՐԵՆԻՆ (Ա.)

Կարո Առաքելեան 1977-էն մինչեւ 1982 հետեւած է Երեւանի պետական համալսարանի հայկական բանասիրական բաժանմունքի հայոց լեզուի եւ գրականութեան դասընթացքներուն: Դասաւանդած է Համազգայինի հայագիտական բարձրագոյն հիմնարկին եւ լիբանանահայ երկրորդական վարժարաններու մէջ: 1985-էն սկսեալ կը դասաւանդէ Հայկազեան Համալսարանին մէջ: Հայաստանի Հանրապետութեան նախագահին կողմէ պարգեւատրուած է «Մովսէս Խորենացի» շքանշանով: Մասնակցած է հայոց լեզուի սփիւռքահայ ուսուցիչներու վերապատրաստման ծրագիրներու՝ Հայաստանի «Սփիւռք» գիտակրթական կեդրոնի կազմակերպութեամբ: Հեղինակ է հայոց լեզուի դասագիրքերու:



Աշակերտներու եւ ուսանողներու բերանացի թէ գրաւոր խօսքին մէջ, ինչպէս նաեւ մեր թերթերուն, պարբերականներուն, գիրքերուն էջերուն վրայ յաճախ կը նկատուին լեզուական (բառերու, բառաձեւերու գործածութեան) բազմապիսի սխալներ, խորթութիւններ, որոնց պատճառով կ'աղաւաղի, կ'աղձատի մեր ոսկեղենիկ լեզուն: «Պահպանենք մայրենին», ուրեմն, ուղղուած է խմբագիրներուն, ուսուցիչներուն, աշակերտներուն եւ բոլոր անոնց, որոնք նախանձախնդիր են իրենց հայերէնը սրբագրելու, յղկելու եւ զարգացնելու:

Պահել - պահպանել - պաշտպանել

Գաղտնիքը, փաստաթուղթերը, յիշատակը... կը պահենք, իրերու վիճակը, գործերը եղածին պէս կը պահպանենք, իսկ սահմանները, հայրենիքը, պատիւը յարձակումներէն կը պաշտպանենք: Այս նախադասութիւններուն մէջ ընդգծուած բառերը ձիշդ օգտագործուած են:

Պահպանել-ը, ուրեմն, նոյն պահել-ն է, բայց ոճական իւրայատուկ նրբերանգով: Օրինակ՝ «Քու նուէրդ կը պահեմ»-ի մէջ պահել-ը ընդհանրական՝ չէզոք երանգ ունի, իսկ «քու նուէրդ կը պահպանեմ»՝ պահպանել-ը կ'արտայայտէ «լաւ, խնամքով պահել»-ու իմաստը: Պահպանել-ը կը գործածենք յատկապէս այն պարագային, երբ առկայ է նաեւ ուշադիր ըլլալու, գիտակից մօտենալու, խնամքով վերաբերելու հանգամանքը. պահ պանել լոռութիւնը, ասանդոյթը, յիշատակները, բարոյական չափանիշները, սիրոյ զգացումը... եւ պատահական չէ, որ զուգադիր կապակցութեամբ կ'ըսենք՝ պահել-պահպանել հաւատարմութիւնը, օդն ու ջուրը, բնութիւնը, բարոյական մաքրութիւնը...

Պաշտպանել-ը այլ երանգ ունի: Այս բառը երկու լրացում կը պահանջէ՝ ինչը պաշտպանել ինչէն: Ինչէն հարցումին պատասխանը կրնայ չարտայայտուիլ՝ պաշտպանել սահմանները (յարձակումներէն), պաշտպանել դէմքը (մժեղներէն)... Պաշտպանել-ը, ուրեմն, որեւէ վտանգի առկայութիւն կամ կարելիութիւն կ'ենթադրէ: Եթէ ըսենք՝ «Պահպանենք մեր լեզուն», կը կարելորենք այն ու-

շաղրութիւնը, խնամքը, որ միայն կախեալ է մեզմէ:

Իսկ «Պաշտպանենք մեր լեզուն..» ըսելով՝ շեշտը կը դնենք դուրսէն եկող վտանգներու, ինչպէս նաեւ ոչ իրաւ հայախօսներու լեզուական խեղութիւններուն ու գոեհկաբանութիւններուն վրայ: Ատոր համար ալ վերջին նախադասութիւնը կրնանք շարունակել՝ «Պաշտպանենք մեր լեզուն անհարկի փոխառութիւններէ եւ չարագուշակ ծամածոութիւններէ»:

Շնորհիւ - պատճառով

Շնորհիւ-ը առաւելաբար կը գործածուի դրական իմաստ արտայայտելու համար՝ աշխատասիրութեան շնորհիւ, դաստիարակութեան շնորհիւ...

Պատճառով-ը կամ ընդհանրական՝ չէզոք իմաստ ունի, կամ ժխտական՝ բացասական: Օրինակ՝ «Ջոհեր եղան դաւաճանութեան պատճառով», «Խորհրդաժողովին չկրցայ մասնակցիլ կնոջս անհանգստութեան պատճառով»:

Նոյն տիպի նախադասութեան մէջ, ըստ բովանդակութեան բնոյթին, շնորհիւ-ն ու պատճառով-ը կը փոխարինեն իրար. «Յորդառատ անձրեւին պատճառով բերքը փձացաւ», «Յորդառատ անձրեւին շնորհիւ լաւ բերք ստացանք»:

Քառեակ - քառատող

Քառեակ-ը բանաստեղծութեան տեսակ է, չորս տողերէ բաղկացած խոհափիլիսոփայական ամբողջական ստեղծագործութիւն: Ահաւասիկ Յովհաննէս Թումանեանի քառեակներէն մէկը.

«Բերանն արնոտ Մարդակերը էն անբան
Հազար դարում հազիւ դառաւ Մարդասպան.
Ձեռքերն արնոտ գընում է նա դեռ կամկար,
Ու հեռու է մինչեւ Մարդը իր ճամբան»:

Քառատող-ը բանաստեղծութեան մը՝ չորս տողերէ բաղկացած մասն է, տունը:

Յեղական - ցեղային

Յեղական բառը ընտիր ցեղէն սերած, ընտիր ցեղին պատկանող կը նշանակէ: Խօսքը, ի հարկէ, ընտանի կենդանիներուն կը վերաբերի. ցեղական ձի, շուն, կով, ցուլ, խոզ...

Յեղային բառը կը նշանակէ «ցեղին պատկանող՝ վերաբերող», «ցեղին մէջ կամ ցեղերու միջեւ տեղի ունեցող». ցեղային կոիւնէր, հակամարտութիւններ. ցեղային յատկանիշներ, եւ այլն:

Յեղային բառը կը գործածուի նաեւ՝ նեղ, խիստ ազգային նշանակութեամբ. ցեղային գաղափարախօսութիւն:

Ջերժ - զուրկ

Ասոնք հոմանիշ բառեր են եւ «բանէ մը հեռու մնալու, բան մը չունենալու» ընդհանուր նշանակութիւնը ունին, սակայն յստակօրէն իրարմէ կը տարբերին կիրարկութեան նրբերանգներով:


Ջերժ-ը կը գործածուի «վատ, մերժելի բանէ մը հեռու մնալու» իմաստով՝ «չարիքներէ, վտանգներէ, դժբախտութիւններէ զերժ»:

Ջուրկ-ը կը գործածուի «որեւէ լաւ յատկութիւն կամ անհրաժէշտ, ցանկալի բան չունենալու» իմաստով՝ «բարիքներէ, օգնութենէն, խելքէ զուրկ»:

Վտեւեալ նախադասութիւններուն մէջ ճիշդ գործածուած են զերժ եւ զուրկ բառերը. «Ջերժ մնալ զանազան մոլութիւններէ ու մոլորութիւններէ, անբարոյ մարդոց լարած ծուղակներէն», «Ամէն անհատա կանութենէ զուրկ այս մարդը իր գոյութիւնը ամէն փորձանքէ զերժ պահելու գաղտնիքը գտեր էր» (Գր. Զօհրապ, «Լուսահոգին»):

Ցանկութիւն - մարմաջ


Արդի հայերէնի գրական լեզուի մէջ ցանկութիւն բառը ընդհանուր կիրարկութիւն ունի, կրնայ գործածուիլ թէ՛ դրական, թէ՛ բացասական միտք արտայայտող խօսքին մէջ. մէկը կրնայ բարի ցանկութիւն ունենալ, ուրիշ մէկը՝ վատ կամ նոյնիսկ նենգ: Բայց այս՝ ցանկութիւն բառին հոմանիշ մը ունինք, որ խօսքի մէջ կրնայ գործածուիլ միայն բացասական երանգով. ամէն գնով աթոռի,



դիրքի տիրանալու, հարստութիւն կուտակելու, ուրիշին ունեցուածքը իւրացնելու ցանկութիւնը արդէն մարմաջ է:

ՅԱՂԹԵԼ-ՅԱՂԹԱՀԱՐԵԼ

Յաղթել բառին իմաստը պարզ է, բայց պէտք է զգոյշ ըլլալ, որ իր լրացումը անձնանիշ բառ ըլլայ՝ յաղթել (որո՞) թշամիին, հակառակորդին: Կրնայ նաեւ ինչի՞ն հարցումին պատասխանել՝ յաղթել վագրին, արջին եւ այլն: Նաեւ՝ «Համբերութեամբ յաղթել ցաւին...»: Ահա այս վերջին պարագային է, որ յաղթել-ը յաղթահարել-ի իմաստը ունի, ուստի ճիշդ պիտի ըլլար այդպէս ալ ըսել՝ յաղթահարել (ի՞նչը) ցաւը, վիշտը, դժուարութիւնը, պատնէշը... Այսինքն՝ յաղթահարել-ը կը գործածուի արգելք մը, խոչընդոտ մը վերացնելու, հանելու իմաստով:



ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ՆԿԱՐԱԳՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԻՈՐՄԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԱՂԲԻՒՐՆԵՐ՝
ՀԱՄԱՑԱՆՑԻ ՎՐԱՅ

*Ուսուցիչներու համար կը ներկայացնենք շարք մը կայքէջեր, որոնք
կը պարունակեն աշակերտներու նկարագրային կազմաւորման
ուսուցման օժանդակող նիւթեր*

Ծնողք, ուսուցիչ թէ տնօրէն, որոնց հետ անմիջական կապի մէջ է մանուկը, խոր ազդեցութիւն կը գործեն անոր ընկերային կազմաւորման եւ նկարագրի կերտման գործընթացին վրայ:

Ինչպէս կ'արտայայտուինք, ինչ վարուելակերպեր կը թոյլատրենք, ինչ կեցուածքներ կը քաջալերենք եւ ինչ սպասումներ ունինք փոքրիկէն՝ այս բոլորը կ'օժանդակեն կերտելու անոր ընկերային եւ նկարագրային կազմաւորումը:

Իմացական թէ զգացական հմտութիւնները կը զարգանան ընտանեկան առողջ մթնոլորտի մը եւ դպրոցական կայուն միջավայրի մը մէջ, ուր ուսումնական ծրագրին համատեղ կը կիրարկուի ընկերային եւ նկարագրի կազմաւորման յատուկ ծրագիր մը:

Տիկ. Շաղիկ Խիտաւերտեան, «Հայ Մանկավարժ»ի անդրա-նիկ թիւին մէջ կը գրէ, թէ դպրոց եւ ուսուցիչ միասնաբար պէտք է որդեգրեն յատուկ մանկավարժական ծրագիր մը, ուր ուսումնական ծրագրին համատեղ պէտք է ընթանան նկարագրի յատկանիշներու զարգացումը, բարոյական արժէքներու ըմբռնումը, օրէնքներու եւ ճիշդի ըմբռնումը, ինքնաձանաչումի զգացումը եւ նման արժէքներ. այս բոլորը՝ դպրոցական ներքին յատուկ մթնոլորտի մը մէջ, վստահութեան, անկեղծութեան, պատասխանատուութեան գիտակցութեան եւ յարգանքի վրայ հիմնուած:

Արդարեւ, Դոկտ. Մարվին Պերքովից (Dr. Marvin Berkowitz) կ'ըսէ. «Ազդու նկարագրային կազմաւորման դասընթացք մը, դպրոցական ուսումնական ծրագիրներու վրայ պարզապէս յաւելելալ ծրագրի մը որդեգրումը չէ, այլ դպրոցական կեանքին, մթնոլորտին եւ միջավայրին փոփոխութիւնն է»:

Ըստ Պերքովիցի՝ դպրոցը պիտի ըլլայ վայր մը, ուր շեշտը դրուած է ընկերային կազմաւորման եւ զգացական հմտութիւններու զարգացման վրայ, ուր շեշտուած են բարոյական արժէքները, ինչպէս՝ անկեղծութիւնը, յարգանքը, արդարամտութիւնը եւ հանդուրժողականութիւնը, ուր կ'իշխէ ամբողջական վստահութիւնը եւ ուր բոլորին (տնօրէն, ուսուցիչ, աշակերտ) միջեւ ներկայ է անբողջական համագործակցութիւն մը:

Ստորեւ, մեր ուսուցիչներուն համար կը ներկայացնենք շարք մը կայքէջեր, որոնք կը բովանդակեն նկարագրի կազմաւորման (character education) մասին յօդուածներ, կրթական համակարգը յուզող հարցեր, գործնական աշխատանքներ իրագործելու յատուկ եղանակներ, ինչպէս նաեւ կ'առաջարկեն դպրոցական եւ դասարանային կեանքին առնչուող զանազան հարցերու լուծումներ:

Անշուշտ, ուսուցիչը այս կայքէջերուն մէջ պիտի փնտռէ զինք հետաքրքրող նիւթեր, որոնք կը յարմարին իր կացութեան եւ կ'առնչուին մեր դպրոցները եւ մեր երեխաները տագնապեցնող հարցերուն:

Միշտ պէտք է ի մտի ունենալ, որ այս կայքէջերը պատրաստուած են օտար երկիրներու մէջ եւ անոնց մէջ կան բաժիններ, որոնք յատուկ են միայն տուեալ երկիրներու կրթական համակարգերուն: Միեւնոյն ատեն, սակայն, անոնք կը բովանդակեն տեղեկութեան հսկայ ցանց մը, որոնցմէ կարելի է օգտուիլ, տրուած ըլլալով որ գոյութիւն ունի կրթութեան եւ դաստիարակութեան ընդհանուր հասկացողութիւն մը, եւ կան հիմնական արժէքներ, որոնք համամարդկային են եւ անփոփոխելի, այսինքն՝ միեւնոյնն են բոլորին համար:

1. www.goodcharacter.com

Այս կայքէջը պատրաստուած է ուսուցիչներու եւ կրթական մարզէն ներս աշխատողներու համար: Գլխաւոր նպատակը նկարագրի կազմաւորման ուսուցումն է: Այստեղ կը նշուին առողջ նկարագրի կազմաւորման համար անհրաժեշտ յատկանիշները, ինչպէս՝ յարգանք, արդարամտութիւն, պատասխանատուութեան գիտակցութիւն, ընկերասիրութիւն, եւայլն: Առաւել՝ կ'առաջարկուի երեխային ձիշդ ձեռով փոխանցել, զանազան կացութիւններու դիմաց, անոր որդեգրելիք անհրաժեշտ կեցուածքը: Ի՞նչ ձեւի հակազդեցութիւն պէտք է ունենայ մանուկը տուեալ կացութեան մը դիմաց, ինչպէս պէտք է հակակշռէ ներքին մղումները, զսպէ բարկութիւնը, լուծէ հարցերը, ձիշդ որոշումի յանգի, եւ այլն:

Ուսուցիչը կրնայ օգտուիլ զինք հետաքրքրող տարիքային խում-

քի աղբիւրներէն:

www.goodcharacter.com/ESTopics.html

(նախակրթարանի համար)

www.goodcharacter.com/MStopics.html (միջնակարգ)

www.goodcharacter.com/HStopics.html (երկրորդական)

Առողջ նկարագրի կազմաւորում կը նշանակէ նաեւ գիտակից քաղաքացի: Կայքէջին մէջ տեղ կը գտնէ նաեւ քաղաքացիութեան դասաւանդումը՝ www.goodcharacter.com/ISOC/Citizenship.html

Կայքէջը կը բովանդակէ նաեւ կրթական մարզը հետաքրքրող զանազան յօդուածներ:

2. www.educationworld.com

Այս կայքէջը կ'անդրադառնայ կրթական համակարգին վերաբերող զանազան հարցերու: Այստեղ կը գտնենք դասի ծրագիրներ (lesson plans): Իւրաքանչիւր դասանիւթի մէջ ինչպէս կարելի է դասը աւելի հետաքրքրական դարձնել, ինչ յաւելեալ աշխատանքներ, խաղեր կամ մեթոտներ կարելի է օգտագործել:

Կայքէջը կը բովանդակէ նաեւ մասնագիտական զարգացում (Professional Development) անունով բաժին մը՝ դասարանը ղեկավարելու ուղղակարութեան, առողջ վարուելակերպի ստեղծման, զանազան հարցեր դիմագրաւելու յատուկ ուղղակարութիւններու մասին: Այնտեղ արծարծուած են անուշադրութեան, ձանձրոյթի, բռնադատման, դասաւանդման եղանակներու վերաբերող նիւթեր:

http://educationworld.com/a_curr

Կայքէջը կը շեշտէ նաեւ ծնողներու դերին կարեւորութիւնը երեխային իմացական եւ ընկերային կազմաւորման մէջ:

Այլ բաժինով մը կ'առաջարկուի արհեստագիտական միջոցներու համարկումը (integration) դասաւանդման ընթացքին: Գիտափորձերու (science experiments), power point-ի, տեսաերիզներու եւ համացանցի ձիշղ օգտագործումը կը

հարստացնեն պատանիին իմացական աշխարհը:

Educationworld կայքէջին մէջ տեղ կը գտնեն նաեւ բազմաթիւ յօդուածներ կրթական համակարգի եւ ընկերային հմտութիւններու զարգացման մասին :

Ուսուցիչ, կրթական պատասխանատու, տնօրէն թէ ծնողք կրնան մեծապէս օգտուիլ այս կայքէջին մէջ տեղ գտած տեղեկութիւններէն:

3. www.lifeskills4kids.com

Այս կայքէջը պատրաստուած է մանկապարտէզէն մինչեւ 6-րդ դասարաններու համար: Գլխաւոր նպատակն է երեխաները անվերջ մղել իրենց լաւագոյնը տալու: Ինքնաձանաչում, պատասխանատուութեան գիտակցութիւն, այլ ընկերային հմտութիւններու դասաւանդում եւ քննական մտքի զարգացում անհրաժեշտ են՝ փոքրիկներուն դասաւանդելու համար բարոյական արժէքներ եւ մշակելու անոնց իմացական աշխարհը:

Կայքէջը յատուկ բաժիններ տրամադրած է նաեւ ծխախոտի եւ թմրեցուցիչներու գործածութեան վնասներուն:

Ուսուցիչը կարելիութիւնը ունի համացանցէն ներբեռնելու (download) դասերու օրինակներ եւ օգտագործելու զանոնք ուսուցման համար:

<http://lifeskills4kids.com/kb/> բաժինին մէջ կ'արձարծուին թէ՛ ծնողները եւ թէ՛ ուսուցիչները հետաքրքրող ընկերային, առողջապահական եւ դաստիարակչական հարցեր:

Այս եւ ընդհանրապէս միւս բոլոր կայքէջերէն կարելի է նաեւ կապուիլ այլ կրթական եւ ընկերային կազմակերպութիւններու կայքէջերուն:

4. www.charactercenter.com

The Center for Character Development կազմակերպութիւնը, որ կը հովանաւորէ այս կայքէջը, կ'առաջադրէ նկարագրի կերտման համար անհրաժեշտ վեց գլխաւոր յատկանիշներ, ատլի ճիշդ՝ արժէքներ, որովհետեւ անոնք նոյնն են տարբեր քաղաքական,

ազգային եւ կրօնական ուղղութիւն ունեցող հոսանքներու մօտ եւ անփոփոխ՝ ժամանակի ընթացքին: Անոնք են՝ վստահելիութիւնը, յարգանքը, պատասխանատուութիւնը, արդարամտութիւնը, հոգածութիւնը եւ քաղաքացիութիւնը:

<http://charactercenter.com/CoreEthicalValues.html>

Բարոյական նկարագիրը չի զարգանար մեքենականօրէն, այլ արդիւնք է գիտակից ջանքերու, որոնց ջամբումը ոչ միայն դպրոցին պարտականութիւնն է, այլ նաեւ ընտանիքին եւ ընկերութեան:

Առողջ նկարագրային հմտութիւններու ձեռք բերումը կարելի կը դարձնէ նաեւ դպրոցական եւ դասարանային դրական մթնոլորտի մը ստեղծումը:


<http://charactercenter.com/ThingsYouCanDo.html> բաժինով կ'առաջարկուի դպրոցական եւ դասարանային զանազան աշխատանքներ ու խաղեր, որոնք կը նպաստեն դրական միջավայրի մը կերտումին:

Նախորդ կայքէջերուն նման հոս տեղ կը գտնեն ուսումնական, դաստիարակչական եւ ընկերային յօդուածներ:

5. www.charactercounts.org

Միացեալ Նահանգներու մէջ՝ նկարագրի կազմաւորման գլխաւոր կազմակերպութիւններէն մէկն է: Ան նախորդ կայքէջին նման՝ նկարագրի կերտման համար անհրաժեշտ կը նկատէ վերոնշեալ վեց բարոյագիտական արժէքներու ուսուցումը ոչ միայն դպրոցի դրական միջավայրի ստեղծման համար, այլ նաեւ այն համոզումով, որ բարոյական նկարագիրը բոլորին կեանքը աւելի դրական եւ ուրախ կը դարձնէ:

<http://charactercounts.org/lesson-plans/ondex.html> Այստեղ կարելի է գտնել դասի ծրագիրներ, ուր շեշտը կը դրուի ոչ միայն նկարագրի կազմաւորման դասաւանդման առանձին ծրագրի մը վրայ, այլ օրինակներով եւ դասածրագիրներով ցոյց կը տրուի ինչպէս այս հմտութիւնները զարգացնել իւրաքանչիւր դասանիւթի ընթացքին (պատմութիւն, ուսողութիւն, լեզու, գիտութիւն, մարզանք...): Այս բոլորը՝ տարիքային տարբեր խմբաւորումներու



համար:

Այս կազմակերպությունը դպրոցներու մէջ յատուկ ծրագիրներ եւ վարժութիւններ կը կազմակերպէ: Ան ունի իր հրատարակութիւնները, որոնք կը ծախուին համացանցին վրայ:

6. www.edpsycinteractive.org

Այս կայքէջը նախորդներուն նման ունի իր տեսակէտները կրթական եւ ընկերային առողջ զարգացման մը համար: Միւս կայքէջերուն մէջ տեղ գտած բոլոր նիւթերն ու մտահոգութիւնները լայնօրէն կ'արծարծուին իր էջերուն մէջ:

<http://www.edpsycinteractive.org/wwwlinks.html> Այստեղ կան զանազան բաժիններ (կրթութիւն, ընտանիք եւ երեխաներ, հոգեբանութիւն, եւ այլն): Կարելի է ընտրել յատուկ մարզ մը, եւ հոն կը գտնէք հսկայական տեղեկութիւններ, յօդուածներ եւ ուսուցիչներու համար օգտաշատ աղբիւրներ:

Այս կայքէջը իր տեղեկութիւններուն մէջ միշտ կը շեշտէ, թէ որեւէ ծրագիր պէտք է միշտ ունենայ իր յստակ նպատակակէտերը եւ ապա արդիւնքներուն ընդմէջէն պէտք է արժեւորէ իր ծրագիրին յաջողութիւնը:

7. www.todaysteacher.com

Այս կայքէջը նախակրթարանի տարիք ունեցող փոքրիկներու, անոնց ծնողներուն եւ յատկապէս ուսուցիչներուն համար պատրաստուած է: Այստեղ եւս կարելի է գտնել ուղեցոյցներ, դասի ծրագիրներ, ինչպէս նաեւ մանուկին ընկերային կազմաւորումը յուզող հարցեր՝ թէ՛ ծնողներու եւ թէ՛ ուսուցիչներու համար: Տան մէջ թէ՛ դպրոցը ինչպէս դրական մթնոլորտ ստեղծել, կարգապահական եւ զանազան այլ մտահոգութիւններ կ'արծարծուին իր էջերուն մէջ:

«ՀԱՅ ՄԱՆԿԱՎԱՐԺ»Ի ԵՆՈՐՀԱՀԱՆԴԵՍԸ

19 Փետրուար 2010-ը լիբանանահայ համայնքին համար նշանաւորուեցաւ ծնունդովը իւրայատուկ պարբերաթերթի մը, որ իր բնոյթով, առաջադրած նպատակներով եւ գործունէութեան համար որպէս հիմք ընդունած սկզբունքներով միտուած է դառնալու ամբողջ սփիւռքահայոյթեան համար օգտակար ձեռնարկ մը՝ գլխաւորաբար մանկավարժութեան եւ դպրոցական հայագիտութեան զարգացման մարզերուն մէջ:

Արդարեւ, այդ օր պաշտօնապէս յայտարարուեցաւ հիմնադրութիւնը «Հայ Մանկավարժ» ուսումնագիտական եւ մանկավարժական հայալեզու եռամսեայ պարբերաթերթին, որուն նախաձեռնողն է Հայ կաթողիկէ պատրիարքարանի Սուրբ Գրիգոր Նարեկացի կեդրոնի Դպրոցական հայագիտութեան զարգացման գրասենեակը:

«Հայ Մանկավարժ»-ի հիմնադրութեան եւ առաջին համարի լոյս ընծայման առիթով էշրէֆիէի ՀԿՄ-ի «Արարատեան» սրահին մէջ տեղի ունեցաւ հանդիսութիւն մը, բարձր հովանաւորութեամբ եւ նախագահութեամբ Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Ամենապատիւ եւ Գերերջանիկ Տէր Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարքին: Հանդիսութիւնը կազմակերպուած էր նշեալ պարբերաթերթի հրատարակիչ մարմինին տնօրէնութեան կողմէ: Ամենապատիւ Հոգեւոր Տիրոջ կողքին ներկայ եղան նաեւ Արի. Հայր Վարդան եպս. Աշգարեան, Գերյ. Հայր Միքայէլ Թ. Ծ.Վ. Մուրատեան՝ մեծաւոր՝ Զմմա-



նու վանքին, Վերապատուելի Քիլաղպեան, Վերապատուելի Փօլ Հայտօսթեան՝ Հայկազեան Համալսարանի նախագահ, Գերյ. Հայր Անդրանիկ Ծ.Վ. Կոանեան՝ գլխավոր խմբագիր «Մասիս» շաբաթաթերթի, Հայ կաթողիկէ հոգեւորականներ, Անարատ Յղութեան միաբանութեան հայ քոյրեր, լիբանանահայ կրթական մարմիններու եւ միութիւններու ներկայացուցիչներ, վարժարաններու տնօրէններ եւ ուսուցիչներ, մամուլի աշխատակիցներ ու բարեկամներ:

Բացման խօսքը արտասանեց Հայ կաթողիկէ պատրիարքարանի Դպրոցական հայագիտութեան զարգացման գրասենեակի վարիչ, «Հայ Մանկավարժ» պարբերաթերթի տնօրէն Վարդան Թաշճեան: Ան նշեց, որ այս նախաձեռնութիւնը մաս կը կազմէ դպրոցական հայագիտութեան զարգացման նպատակով Հայ կաթողիկէ պատրիարքարանին կողմէ նոր հիմնադրուած յատուկ գրասենեակի տարած աշխատանքներուն: Վ. Թաշճեան ըսաւ, որ նորահաստատ հանդէսը կը միտի մանկավարժական եւ ուսումնագիտական անհրաժեշտ նիւթեր ներկայացնել հայկական կրթական հաստատութիւններու պատասխանատուներուն եւ ուսուցիչներուն, նաեւ հայ ծնողներուն՝ առ ի աջակցութիւն հայկական դպրոցներու մէջ մանկավարժական գործի զարգացման ուղղուող ջանքերուն: Ան յայտնեց, որ պարբերաթերթը կոչուած է նաեւ ըլլալու հանդիպման եւ քննարկումներու միջավայր մը՝ հայ ուսուցիչներու, հայոց լեզուի եւ հայագիտական այլ նիւթեր դասաւանդող մասնագէտներու, սփիւռքի մէջ դպրոցական հայագիտութեան խնդիրներով հետաքրքրուած գիտական եւ մտաւորական հանրութեան ներկայացուցիչներուն համար: Վ. Թաշճեան ըսաւ, որ «Հայ Մանկավարժ»-ը շփումներ հաստատած է սփիւռքեան տարբեր համայնքներու մէջ ապրող մասնագէտներու հետ՝ ապահովելու համար անոնց ներդրումը այս ծրագիրին, ինչպէս նաեւ ցանկութիւն ունի համագործակցութեան հորիզոնները ընդլայնելու Հայաստանի համապատասխան կառոյցներուն հետ, որոնք այս իմաստով արդէն իսկ գործակցութեան պատրաստակամութիւն արտայայտած են: Այս ծիրին մէջ հաղորդուեցաւ, որ հանդիսութեան նախորդող շաբթուան ընթացքին «Հայ Մանկավարժ»-ի պատասխանատուները երեւանի մէջ տեսակցութիւններ ունեցած են Հայաստանի՝ Սփիւռքի նախարար տիկին Հրանոյշ Յակոբեանի, կրթութեան նախարար պրն. Արմէն Աշոտեանի, Աբովեանի անուան մանկավարժական պետական համալսարանի նախագահ պրն. Արտուշ Դուկասեանի եւ Սփիւռք գիտա-կրթական կեդրոնի ղեկավար պրն. Սուրէն Դանիլեանի հետ, որոնց հետ կայացած է շահագրգիռ զրոյց՝ «Հայ Մանկավարժ»-ի հրատարակութեան եւ հրատարակիչ մարմինին հետ այլ մարզերու մէջ հետագայ գործակցութեան մասին:

Այս ցուցադրուեցաւ տեսաերիզ մը, որուն ընդմէջէն Հայաստանի՝ Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեան, կրթութեան նախարար Արմէն Աշոտեան եւ «Խ. Աբովեան» պետական-մանկավարժական համալսարանի նախագահ Արտուշ Դուկասեան իրենց գնահատանքը, բարեմաղթութիւններն ու գործակցելու պատրաստակամութիւնը յայտնեցին «Հայ Մանկավարժ»-ին՝ լուսարձակի տակ առնելով Սփիւռքի մէջ նման հանդէսի մը հրատարակութեան կարեւորութիւնն ու անոր ունենալիք դերակատարութիւնը՝ մանկավարժական եւ հայեցի դաստիարակութեան գործին մէջ:

Հայրենի պետական եւ ակադեմական ներկայացուցիչներու ուղերձներէն ետք «Սուրբ Գրիգոր Նարեկացի» կեդրոնի աշխատակցուհի Նայիրի Պուսոյեան հանդիսութեան մասնակիցներուն ներկայացուց «Հայ Մանկավարժ»-ի՝ «Ձմեռ 2010» թուագրեալ առաջին համարին բովանդակութիւնը՝ յօդուած առ յօդուած:

Անկէ ետք խօսք առաւ «Հայ Մանկավարժ»-ի պատասխանատու խմբագիր Հայր Վարդան վրդ. Գազանձեան: Հայր Գազանձեան իր խօսքին մէջ նշեց, որ նշեալ հանդէսը կը միտի սատարել հայ մանկավարժին՝ անոր տալով իր մարզին վերաբերող գիտական, մանկավարժական տեղեկութիւններ, խորանալու առիթներ, որպէսզի ան, իր կարգին, սերունդներուն փոխանցելու եւ զանոնք դաստիարակելու կարողականութեամբ զինուած ըլլայ: Ան յատուկ կերպով անդրադարձաւ նոր սերունդները լաւագոյնս դաստիարակելու դժուարին առաքելութեան՝ նշելով, որ այդ իմաստով օգտակար հանդիսանալու նպատակ հետապնդող նախաձեռնութիւն է «Հայ Մանկավարժ»-ը:

Վարդան վրդ. Գազանձեան հրաւեր ուղղեց մանկավարժներուն եւ ուսուցիչներուն՝ գաղափարներով, առաջարկներով, գրութիւններով կամ այլապէս համագործակցելու եւ իրենց ներդրումը ունենալու «Հայ Մանկավարժ»-ի կայացման մէջ, հաւաստելով, որ սոյն հրատարակութիւնը՝ ուղղուած ըլլալով ընդհանրական նպատակներու, կարիքը ունի ընդհանրական ջանքերու եւ մասնակցութեան:

«Հայ Մանկավարժ»-ի հիմնադրութեան նուիրուած հանդիսութեան գլխա-



ուր բանախօսն էր Հայկազեան համալսարանի նախագահ, վեր. դոկտ. Փօլ Հայտօսթեան, որ իր խօսքի սկիզբին իսկ այս հանդէսը նկատեց «վերածնունդի մը շնորհատրեւի խոստում մը»: Վերապատուելին իր խօսքին մէջ ծանրացաւ հինգ հիմնական կէտերու վրայ, որոնք հարցադրումներ եւ նոյն ատեն մարտահրաւերներ էին՝ «Հայ Մանկավարժ»-ին ուղղուած:

Իր խօսքի ասարտին վերապատուելի Հայտօսթեան բարի երթ ու յաջողութիւն ցանկաց «Հայ Մանկավարժ»-ին՝ հայ մանկավարժներու զարգացման ուղղուած աշխատանքին մէջ:

Հանդիսութեան մասնակիցներուն իր սրտի խօսքը փոխանցելու համար բեմ հրաւիրուեցաւ, ինչպէս ներկայացման ընթացքին որակուեցաւ, «Սփիւռքահայ մանուկի նահապետը եւ մեծատորը»՝ Հայր Անդրանիկ Ծ. վրդ. Կոանեան: Հայր Կոանեան «Հայ Մանկավարժ»-ի հրատարակութեան լծուած անձնակազմը նկատեց ռահվիրաներ, որոնք ծամբայ կը բանան ու կը լուսատրեն: Ան աւելցուց, որ այդուամենայնիս սկսուած աշխատանքը կիսատ պիտի մնայ, եթէ անոր հետեւողներ եւ անով զօրակցողներ գոյութիւն չունենան: Ան ըսաւ, թէ զինուորը ունի իր զօրանոցը՝ հարց տալով, որ դաստիարակն ալ ունի իր զօրանոցը: Այս հարցումը հայր Անդրանիկ Կոանեան մարտահրաւեր նկատեց «Հայ Մանկավարժ»-ին, որովհետեւ, ըստ անոր՝ «Այսօր մեծ են դժուարութիւնները, սերունդներու մտայնութիւն փոխելու խնդիր կայ, պէտք է պայքարը այնպէս մը ծաւալել, որ այսօրուան ցանածները՝ վաղը հնձելու կարելիութիւն ու մարդուժ ստեղծուի»: Ան յոյս յայտնեց, որ մանկավարժական եւ ուսուցչական ասպարէզին մէջ գործողները ոչ միայն կարդան «Հայ Մանկավարժ»-ին նիւթերը, այլեւ իրենց առօրեային մէջ գործնականացնեն զանոնք, որպէսզի հանդէսը իր նպատակին ծառայած ըլլայ:

Հանդիսութեան մասնակիցները սրահէն մեկնեցան՝ իրենց հետ տանելով օրինակներ «Հայ Մանկավարժ»-ի առաջին համարէն՝ տրամադրուած հրատարակիչ մարմինին կողմէ, որուն համար այսուհետեւ խիստ անհրաժեշտ պիտի ըլլայ կապը հայ մանկավարժական հանրութեան ներկայացուցիչներուն հետ՝ ի խնդիր պարբերաթերթի կայացման եւ անոր հետապնդած նպատակներուն իրականացման:



ԲԱՐԻ ԵՐԹ, «ՀԱՅ ՄԱՆԿԱՎԱՐԺ»

Հայաստանի Հանրապետության Սփիւռքի Նախարար Տիկին Հրանոյշ Յակոբեանի ուղերձը՝ «Հայ Մանկավարժ»-ի հիմնադրության նուիրուած հանդիսութեան մասնակիցներուն

Ամենապատիւ Հոգեւոր Տէր, հոգեւոր հայրեր, սիրելի ազգակիցներ, հայրենակիցներ, տիկնայք եւ պարոնայք.

Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի Նախարարութեան անունից ջերմօրէն եւ սիրով ողջունում եմ, շնորհաւորում եմ այս հայակնիք, հայաբոյր ձեռնարկը՝ «Հայ Մանկավարժ»-ի ծնունդը: Ինձ համար մեծ ուրախութիւն է, որ 2010 թուականին, երբ Սփիւռքի Նախարարութիւնը յայտարարել է մայրենի լեզուի տարի, Հայ Կաթողիկէ համայնքը կարողանում է ստեղծել մի պարբերական, որը ուղղուած է հայապահպանութեանը, հայեցի կրթութեանը, հայեցի դաստիարակութեանը: Խորհին շնորհակալութիւն ձեզ՝ այս փայլուն նախաձեռնութեան համար:

Անկրկնելի է պարբերականի դերն ու նշանակութիւնը հայկական կրթութեան՝ դպրոցի համար, որովհետեւ չունենալով պետութիւն դրսում, չունենալով պետական ինստիտուտներ, փաստօրէն, այս պարբերականը գալիս է լրացնելու այն մեթոդականը, այն ուսուցողականը, որը պակասում է այսօր մեր սփիւռքահայ ուսուցիչներին: Ես հաւատացած եմ, որ «Հայ Մանկավարժ»-ը կը դառնայ ամբողջ հայութեան, բոլոր դպրոցների, բոլոր մանկավարժների կարեւորագոյն դաստիարակը, գիտական-մեթոդական ուղեցոյցը: Եւ շատ կ'ուզե-

նայի, որ հայաստանեան մանկավարժները նոյնպէս եւ սովորէին այս ձեռնարկից, եւ, ինչու չէ, նաեւ հրապարակուէին այս հոյակապ պարբերականում: Ինձ համար նաեւ անսահման երջանկութիւն է, ուրախութիւն, որ այսօր այս փոքրացող, արագ փոփոխուող աշխարհում մեր հայկականութիւնը, մեր հայ սփիւռքը կարողանում է իր ինքնութիւնը պահել եւ պահպանել, իսկ դրա արմատը, ողնաշարը մեր հայ ուսուցիչն է: Ծնորհակալութիւն ձեզ, սիրելի ուսուցիչներ, որ դուք ձեզ նուիրել էք հային, հայութեանը, Հայաստանին, որովհետեւ ուսուցչի կոչումը ամենապատուաբերն է: Ես կարծում եմ, որ ուսուցչապաշտութիւնը հայ ժողովրդի մէջ եղել է, կայ ու կը շարունակուի: Դուք հունտերն էք ցանում մեր երեխաների, մեր երիտասարդութեան հոգիներում: Դա հայութեան, հայապահպանութեան, հայրենասիրութեան հունտեր են: Կրկին ու կրկին շնորհատրում եմ ձեզ, մաղթում մեծ ու լուրջ յաջողութիւններ, եւ նաեւ շնորհակալ եմ Ամենապատիւ Հոգեւոր Տիրոջ, որի բարձր հովանաւորութեամբ կազմակերպում, ստեղծում եւ առաջ է մղում «Հայ Մանկավարժ»-ի գործը եւ խօսքը: Առանձնակի ուզում եմ շնորհակալութիւն յայտնել դպրոցական հայագիտութեան զարգացման տրօրէնութեանը, որի նախաձեռնութեամբ կազմակերպուեց եւ լոյս աշխարհ եկաւ «Հայ Մանկավարժ»ը: Վստահ եմ, որ Ամենապատիւ Հոգեւոր Տիրոջ հովանաւորութեամբ դեռ երկար ժամանակ իր ծամբան կ'անցնի մեր այս սիրելի պարբերականը: Կրկին ու կրկին շնորհատրում եմ եւ կազմակերպիչներին, եւ նախաձեռնողներին, եւ հովանաւորներին, եւ մեր սիրելի ուսուցիչներին ու տնօրէններին, եւ ասում. Բարի երթ քեզ, սիրելի «Հայ Մանկավարժ»:



ԱԻԵԼԻ ԼԱՅՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԸՆԴԱՌԱՋ

*Հայաստանի Հանրապետության Կրթության
Նախարար Պարոն Արմէն Աշոտեանի ուղեր-
ձը՝ "Հայ Մանկավարժ"-ի հիմնադրութեան նուիր-
ուած հանդիսութեան մասնակիցներուն*

Սիրելի հայրենակիցներ, ցանկանում եմ ողջու-
նել ձեզ, հազարաւոր քիլոմէթրեր հեռու գտնուող
մեր հայրենակիցներին, որոնք հաւաքում են այ-
սօր շատ կարեւոր մի իրադարձութեան առիթով՝
այն է սփիւռքահայ մեր օջախներում հիմնադրուած
առաջին մանկավարժական հանդէսներից մէկի
"Հայ Մանկավարժ"-ի շնորհանդէսին: Ուզում եմ
օգտուելով այս առիթից նաեւ տեղեկացնել ձեզ,
սիրելի հայրենակիցներ, այն ամէնի մասին, ինչ
ծրագրաւորել է եւ անում է մեր նախարարութիւնը,
նպաստելու համար հայապահպանութեանը՝ մեր
սփուռքահայ գաղթօջախներում, հայոց լեզուի,
գրականութեան, պատմութեան մասին գիտելիք-
ների տարածմանը, ինչպէս նաեւ մեր սփիւռքահայ
ուսումնական հաստատութիւններում, հայ դրպոց-
ներում, նաեւ ուսուցիչների վերապատրաստմանը
եւ որակաւորումների բարձրացմանը: Մեր նախա-
րարութեան հիմնական գործառոյթներից մէկը
նաեւ սփիւռքում աշխատող, գործող հայ մանկա-
վարժին աջակցելն է, որովհետեւ հայապահպա-
նութիւնը դրուած է մեր պետական քաղաքա-
կանութեան որպէս հիմնադրոյթներից մէկը, եւ մեր
նախարարութիւնը այստեղ այլ նախարարութիւն-
ների՝ արտաքին գործերի, սփիւռքի նախարարու-
թեան, մշակոյթի նախարարութեան հետ միասին
մեծ անելիքներ ունի: Մեր նախարարութիւնը այս

տարուանից պատրաստուում է հրամցնել հայերէնի ուսուցման եւ վերապատրաստումների հեռավար ծրագիր, որ այս տարի կը ներդրուի փորձնական ձեով: Այդ ծրագրի միջոցով, համապատասխան համացանցային կայքէջ այցելելով դուք կը կարողանաք առցանց ռեժիմով մասնակիցը լինել Հայաստանում ուսուցիչների վերապատրաստման գործընթացին: Ինչպէս արդեն ասացի, այս ծրագիրը այս տարի լինելու է առաջին անգամ, լինելու է փորձնական ծրագրի տեսքով, եւ մենք ակնկալում ենք ձեր աքթիւ մասնակցութիւնը, օգտագործումը մեր նոր ելեքթրոնային ռեսուրսների, ինչպէս նաեւ ձեր կարծիքները, առաջարկութիւնները, միւս տարիների համար այս նոր գործի, շփման նոր ձեւի կատարելագործման նպատակով: Կը պահպանուի նաեւ ամանակական դարձած հայ ուսուցիչների վերապատրաստման ծրագիրը: Յաւոք, ծրագրի տարողունակութիւնը ֆինանսական չի ներուում, որ մենք կարողանանք բոլոր կարիք ունեցող հայ ազգի ուսուցիչներին հրաւիրել Հայաստան եւ վերապատրաստել, բայց կարծում եմ, որ համայնքների աքթիւ մասնակցութիւնը, որ մենք ունենք թէ լիբանանահայ համայնքից, թէ այլ Մերձավոր Արեւելքի եւ աշխարհի այլ կրթական համայնքներից թոյլ կը տայ մեզ նաեւ ֆիզիկական կապը պահել մեր հայրենակիցների հետ: Յատուկ ուզում եմ շեշտել, որ դասագրքերով ապահովութեան խնդիրը նոյնպէս մեր ուշադրութեան կենտրոնում է: Այն բոլոր յայտերը, որ գալիս են մեր սփիւռքահայ ուսումնական հաստատութիւններից, մենք փորձում ենք ժամանակին բարարել. իհարկէ այստեղ եւս կան խնդիրներ: Հնարաւորութիւնները դեռեւս սահմանափակ են, որպէսզի մենք բոլոր յայտերը ամբողջութեամբ ծաւալով կարողանանք հրամցնել ձեզ, բայց, յարգելի գործընկերներ, առաջարկում ենք ձեզ այս տարի նոյնպէս համագործակցութեան նոր ուղի որոնել. մենք փորձելու ենք այս տարի մեր սփիւռքահայ գաղթօջախներում աշխատող հայկական դպրոցներին հրամցնել նաեւ ելետրոնային դասագրքեր՝ դասագրքերի ելեկտրոնային տարբերակներ՝ խտասկաւառակներով, ֆայլերով, որպէսզի 21-րդ դարի տեխնոլոկիաները նոյնպէս օգտակար լինեն մեր շնորհակալ գործում, հայապահպանութեան գործում եւ օգտակար լինի նաեւ կրթական ոլորտում նորարարական տեխնոլոկիաների ներմուծման տեսակէտից: Սա՝ շատ հակիրճ մեր ապագայ անելիքների մասին: Ուզում եմ նորից օգտուելով աղիթից եւ շնորհատրել ձեզ, ողջունել ձեզ Պէյրութում "Հայ Մանկավարժ" հանդէսի լոյս ընծայման կապակցութեամբ, եւ յուսալ, որ մեր հանդիպումները դեռեւս առջեւում են թէ Հայաստանում, թէ, եթէ Աստուած այդպէս կամեցաւ, ձեր գաղթօջախներում: Շնորհակալ եմ, եւ ամենայն բարին՝ ձեր շնորհակալ գործում:



ՊԱՏՐԱՍԵ ԵՆՔ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՁԵՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Խ. Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանի նախագահ Դոկտ. Արտուշ Ղուկասեանի ուղերձը՝ «Հայ Մանկավարժ»-ի հիմնադրության նուիրուած հանդիսութեան մասնակիցներուն

Խ. Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախօսական անձնակազմի, ուսանողութեան եւ իմ անունից ողջունում եմ այս կարեւոր ձեռնարկը, որը նախաձեռնուած է այսօր, ողջունում եմ բոլորին, ողջունում եմ բոլոր մեր գրչակիցներին, բոլոր մանկավարժներին այս կարեւոր հանդիսութեանը մասնակցելու համար: «Հայ Մանկավարժ» հանդէսի այս անդրանիկ համարի թողարկումը կարեւոր գործ է սփիւքում՝ մանկավարժական կադրերի պատրաստման, սփիւքի հայագիտական գործունէութիւնը աւելի բարձր մակարդակի պահպանելու համար: Ողջունելով բոլոր ներկաներին, ցանկանում եմ, որ Հայաստան-Սփիւք փոխյարաբերութիւնները այս ուսումնագիտական եւ մանկավարժական հանդէսի շնորհիւ եւս մէկ աստիճան աւելի բարձրանայ: Մենք շահագրգռուած ենք, մեր կողակտիւր եւ ամբողջ Հայաստանի մանկավարժները, որպէսզի մեր հայկական կրթօջախները սփիւքում եւ, մասնաւորապէս Պէյրութի հայ համայնքի հայ հոգին բարձր լինի , եւ մասնուկները կարողանան հայեցի կրթութիւն ստանան: Ողջունելով ներկաներին, կը խնդրէի հետեւեալը. հնարաւորութիւն տալ Հայաստանի մանկավարժական մտքին, որ «Հայ Մանկավարժ»-ին միջոցով իր մտորումները փոխանցէ մեր սփիւքի հայրե-

նակիցներին, մեր ուսուցիչներին: Ողջունում եմ բոլորիդ եւ ցանկանում եմ արգասաբեր աշխատանք: Նաեւ իմ պատրաստակամութիւնն եմ յայտնում մեր կոլեկտիւի անունից մասնակցելու "Հայ Մանկավարժ" ուսումնագիտական եւ մանկավարժական հանդէսի աշխատանքներին, բերելով մեր նպաստը՝ եւ որպէս խմբագրական կազմի անդամներ, ե՛ւ որպէս յօդուածներով հանդէս գալու հնարաւորութեան դէպքում: Ծնորհաւորում եմ Սուրբ Գրիգոր Նարեկացի կենտրոնի ղեկավարներին եւ դպրոցական հայագիտական զարգացման գրասենեակի բոլոր աշխատակիցներին, մասնաւորապէս Հայր Վարդան Գազանձեանին եւ պարոն Վարդան Թաշձեանին, այս հետաքրքիր ձեռնարկը կազմակերպելու համար:

ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐ՝ «ՀԱՅ ՄԱՆԿԱՎԱՐԺ»-Ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Խանդավառությամբ իմացանք «Հայ Մանկավարժ» եռամսեայ պարբերաթերթի հիմնադրման մասին եւ գոհունակությամբ թերթատեցինք անոր էջերը, երբ առաջին թիւը հասաւ մեզի: «Հայ Մանկավարժ»-ի նպատակն է պիտանի նիւթերով նպաստել հայ դպրոցներու մէջ մանկավարժութեան զարգացման, վայր հանդիսանալ առընչեալ նիւթերու քննարկման ու մշակման: Հետեւաբար, պարբերաթերթը կը ներկայանայ իբրեւ բաց հրապարակ բոլոր առաջարկներու, գաղափարներու եւ գրութիւններու համար:

Նորա Պարութեան
«Նոր Յառաջ» եռօրեայ, Փարիզ-Ֆրանսա

Շնորհաւորութիւններս եւ ամենաջերմ բարեմաղթութիւններս՝ յաջողութեան եւ յարատեւութեան, «Հայ Մանկավարժ»-ի ծնունդին առիթով:

Հայր Լեւոն Զէքիեան
Վենետիկ-Իտալիա

Կը շնորհաւորեմ «Հայ Մանկավարժ»-ի հրատարակումը: Ասիկա բացառիկ երեւոյթ մըն է սփիւռքահայ մեր իրականութեան մէջ՝ յօգուտ սփիւռքահայ վարժարաններուն:

Վահագն Գարագաշեան
«Հորիզոն» շաբաթաթերթի գլխաւոր խմբագիր
Մոնրէալ- Գանատա

Անմիջապէս աչքէ անցուցի «Հայ Մանկավարժ»-ի առաջին թիւը: Կը շնորհաւորեմ: Նատ շահեկան, հրաշալիօրէն ներկայացուած, բացառիկ լեզուով խմբագրուած, կոկիկ թիւ մըն է:

Վահէ Թաշճեան
Պատմաբանութեան դոկտոր, Պերլին-Գերմանիա

Մեծ հաճոյքով կարդացի «Հայ Մանկավարժ» հանդէսի հրատարակութեան մասին. կը շնորհատրեմ եւ յաջողութիւն կը մաղթեմ ձեզի այս շատ կարեւոր ձեռնարկին առիթով: Շատ հետաքրքրական նպատակներ եւ բովանդակութիւն մը կը խոստանաք, որ անպայման մեծ օգտակարութիւն պիտի ունենայ հայ ուսուցիչին, մանկավարժին, հայ ծնողներուն եւ պատանիներու վարիչներուն:

Ստորագրեալս կ'ապրիմ Մոնրէալ եւ մօտէն կը հետեւիմ գաղութի Սուրբ Յակոբ վարժարանի աօրեային՝ որպէս վարժարանիս Կրթական Գործադիր մարմնի անդամ: Անձնապէս շատ պիտի փափաքէի ունենալ օրինակ մը եւ ներկայացնել մեր ընդհանուր կազմին՝ նախ ծանօթացնելու համար հրատարակութիւնը եւ ապա քաջալերելու համար՝ ապագայի բաժանորդագրութեան համար: Առ այդ կը խնդրեմ որ ել.նամակով մը տեղեկացնէք, թէ ինչպէս կրնամ ունենալ օրինակ մը՝ յիշելով սակը եւ առաքման միջոցները:

Յաջողութեան մաղթանքներով՝
Տիրուկ Մնակեան-Մանձիկեան
Մոնրէալ-Գանատա

Շնորհակալութեամբ ստացայ «Հայ Մանկավարժ»-ի առաջին համարը. մեր յաջորդ Կրթական ժողովին կը ներկայացնեմ մեր միւս անդամներուն եւ Տնօրէնութեան:

Տիրուկ Մնակեան-Մանձիկեան

Մեծ ուրախութեամբ լսեցի, որ սկսած է հրատարակութիւնը «Հայ Մանկավարժ» հանդէսին, որ այս օրերուս անհրաժեշտութիւն մը է Սփիւռքի մէջ տարածուած մեր կրթական մշակներուն համար: Պիտի խնդրեմ ձեզմէ, որ եթէ կարելիութիւնը կայ առաջին թիւէն օրինակ մը ուղարկէք ինծի, որպէսզի, գիտնալէ ետք բաժանորդութեան պայմանները, բաժանորդագրութիւնք այս պարբերաթերթին: Անունս Հայկ Գազանձեան է, ես 23 տարիէ Մոնրէալ կը գտնուիմ եւ կը պաշտօնավարեմ Սուրբ Յակոբ ազգային վարժարանին մէջ, նաեւ տնօրէնն եմ Շաքաթօրեայ վարժարանին, ուր օտար վարժարան յաճախող աշակերտներու կը դասասանդէնք Հայերէն լեզու:

Հայկ Գազանձեան
Մոնրէալ-Գանատա

Աշխատանքային այցելություն՝ Երեւան
**ԳՈՐԾԱԿՅՈՒԹԵԱՆ ՀՈՐԻԶՈՆԸ Կ'ԸՆԴԼԱՅՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՈՒ ԱԿԱԴԵՄԱԿԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՆ ՀԵՏ**

Մէկ կողմէ՝ Հայ կաթողիկէ կրթական եւ մշակութային կառոյցներուն, իսկ միւս կողմէ՝ Հայաստանի համապատասխան մարմիններուն միջեւ յարաբերութիւնները զարգացնելու, ինչպէս նաեւ անոնց միջեւ գործակցութեան ենթահողը ամրապնդելու համար կարեւոր առաջընթաց արձանագրեց Հայ կաթողիկէ պատրիարքարանի Սուրբ Գրիգոր Նարեկացի կեդրոնի ներկայացուցիչներուն աշխատանքային այցելութիւնը քաղաքամայր Երեւան՝ ընթացիկ տարուան Փետրուարի 9-էն 16:

Արդարեւ, Սուրբ Գրիգոր Նարեկացի կեդրոնի տնօրէն հայր Վարդան վրդ. Գազանձեան եւ նշեալ կեդրոնին Դպրոցական հայագիտութեան զարգացման գրասենեակի վարիչ պրն. Վարդան Թաշձեան մէկ շաբթուան ընթացքին շարք մը հանդիպումներ ունեցան Հայաստանի Հանրապետութեան պետական բարձրատիժման եւ ակադեմական պատասխանատուներու հետ, գլխաւորաբար զանոնք իրազեկելու համար նշեալ կառոյցներու գործունէութեան ու նաեւ քննարկելու համար գործակցութեան կարելիութիւններ եւ եղանակներ:

Մասնաւորաբար հայր Գազանձեան եւ պրն. Թաշձեան Սփիւքի նախարար տիկին Հրանոյշ Յակոբեանի եւ կրթութեան ու գիտութեան նախարար պրն. Արմէն Աշոտեանի հետ ամենաջերմ մթնոլորտի մէջ ունեցան շահագրգիռ զրոյցներ՝ Հայ սփիւքի մէջ կրթութեան, հայեցի դաստիարակութեան, հայապահպանութեան, հայրենիք-արտերկիր յարաբերութիւններուն եւ երկկողմ գործակցութեան վերաբերող խնդիրներու մասին: Հայրենի նախարարները մեծապէս գնահատեցին Սփիւքի մէջ հայապահպանութեան եւ հայկական կրթութեան գործին ի խնդիր Հայ կաթողիկէ պատրիարքութեան գործադրած ջանքերը եւ հաստատեցին իրենց անվերապահ աջակցութիւնը նշեալ ոլորտներուն մէջ պատրիարքութեան նախաձեռնած ծրագիրներուն: Հայր Գազանձեան եւ պրն. Թաշձեան իրենց հերթին ներկայացուցին Սուրբ Գրիգոր Նարեկացի կեդրոնի եւ Դպրոցական հայագիտութեան զարգացման գրասենեակի ծրագիրները, ինչպէս նաեւ ամփոփ գնահատական մը կատարեցին Լիբանանի հայ գաղութի ներկայ իրադրութեան, կեդրոնանալով մասնաւորապէս կրթական ոլորտին դիմագրաւած մարտահրաւերներուն վրայ: Այս առիթով անոնք գնահատեցին զոյգ նախարարութիւններուն ջանքերը՝ նե-

ցույ կանգնելու Հայկական սփիւռքին՝ վերջինիս ազգային ինքնութեան պահպանման պայքարին մէջ:

Հայր Գազանձեան եւ պրն. Թաշձեան նշեալ երկու նախարարութիւններու տարբեր վարչութիւններու պատասխանատուներուն հետ ունեցան աշխատանքային օգտաշատ տեսակցութիւններ, որոնց ընթացքին կարելի եղաւ կազմել ուրուագիծը հետագայ գործակցութեան ուղղութիւններուն, գլխաւորաբար տեղեկատուութեան փոխանակման, համահայկական ծրագիրներու մասնակցութեան, ուսուցչական համագումարներու կազմակերպման եւ Սփիւռքի մէջ դպրոցական հայագիտութեան զարգացման ուղղուած համատեղ ձեռնարկներ իրականացնելու վերաբերեալ:

Երեւանի մէջ կայացած հանդիպումները ընդգրկեցին Խաչատուր Աբովեանի անուան մանկավարժական պետական համալսարանի նախագահ պրն. Արտուշ Դուկասեանը եւ «Սփիւռք» գիտա-կրթական կեդրոնի ղեկավար պրն. Սուրէն Դանիէլեանը: Մանկավարժական գործի զարգացման առաջատարը համարուող հայրենի համալսարանի ղեկավարին հետ հանդիպումը յատկանշուեցաւ գործնականութեամբ. փրոֆեսէօր Դուկասեան յստակօրէն նշեց այն ուղղութիւնները, որոնց մէջ մանկավարժական համալսարանը եւ անոր անձնակազմը կրնան օգտակար հանդիսանալ սփիւռքահայ եւ այդ շարքին՝ նաեւ Հայ կաթողիկէ համայնքի կրթական կառոյցներուն: Կարեւորուեցան ինչպէս դասախօսներու, այնպէս ալ ուսանողներու փոխայցելութիւնները՝ հայ մանկավարժական մտքի եւ փորձի հարստացման համար:

Բոլոր տեսակցութիւններուն ժամանակ առանձնակի ուշադրութիւն նուիրուեցաւ Հայ կաթողիկէ պատրիարքարանի դպրոցական հայագիտութեան զարգացման գրասենեակի նախաձեռնած «Հայ Մանկավարժ» պարբերաթերթին, որուն առաջին համարէն օրինակներ նուիրուեցան հայրենի պատասխանատուներուն: Վերջիններս խորապէս գնահատեցին Հայ Սփիւռքի դժուարին պայմաններուն մէջ նման աննախադէպ եւ տարողունակ ծրագիր



մը իրականացնելու ուղղութեամբ Հայ կաթողիկէ պատրիարքութեան ձեռնարկած քայլը եւ խոստացան բոլոր միջոցներով նպաստել անոր կայացման: Նախարարներ Հ. Յակոբեան եւ Ա. Աշոտեան առաջարկեցին պարբերաբերթի ելեկտրոնային տարբերակը տեղադրել իրենց նախարարութիւններու համակարգին մէջ գործող կայքէջերու վրայ, իսկ փրոֆեսէօր Ղուկասեան առաջարկեց պարբերաբերթի աշխատակազմին մէջ ներառել մասնագէտներ՝ Խաչատուր Աբովեանի անուան մանկավարժական պետական համալսարանէն՝ առ ի մասնակցութիւն, իր բնորոշումով, այս յոյժ կարեւոր նախաձեռնութեան: Ընդառաջելով «Հայ Մանկավարժ» պարբերաբերթի պատասխանատուներու փափաքին՝ Հայաստանի Սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեան, կրթութեան ու գիտութեան նախարար Արմէն Աշոտեան եւ Խ. Աբովեանի անուան պետական-մանկավարժական համալսարանի նախագահ Արտուշ Ղուկասեան ուղերձներ յղեցին՝ «Հայ Մանկավարժ»-ի հիմնադրութեան նուիրուած: Փետրուար 19-ին Պէյրութի մէջ «Հայ Մանկավարժ»-ի հիմնադրութեան նուիրուած հանդիսութեան ժամանակ նշեալ ուղերձներու տեսագրութիւնները մատուցուեցան հանդիսութեան մասնակիցներուն՝ ստեղծելով մեծ խանդավառութիւն: Անոնց մէջ հայրենի պատասխանատուները իրենց գնահատանքը, բարեմաղթութիւններն ու գործակցելու պատրաստակամութիւնը յայտնեցին «Հայ Մանկավարժ»-ին՝ լուսարձակի տակ առնելով Սփիւռքի մէջ նման հանդէսի մը հրատարակութեան կարեւորութիւնն ու անոր ունենալիք դերակատարութիւնը մանկավարժական եւ հայեցի դաստիարակութեան գործին մէջ:

Սոյն այցելութեանց զուգահեռ՝ Հայր Վարդան վրդ. Գազանձեան տեսակցութիւններ ունեցաւ Արեւելեան երոպայի եւ Հայաստանի Հայ կաթողիկէ եկեղեցոյ առաքելական կառավարիչ Հայր Վահան վրդ. Օհանեանի եւ Թիֆլիսի մէջ՝ Պապական նուիրակ Քլաուտիօ Կուձերոթթի արքեպիսկոպոսին հետ, որոնց յանձնեց «Հայ Մանկավարժ»-ի օրինակներ:





ԲԱՌԱՐԱՆ

ներկայ համարին մէջ օգտագործուած որոշ եզրերու

character education - նկարագրի կազմաւորում

cheating in classroom - օրինազանցում դասարանին մէջ

co-teaching - կրթակցութիւն

disabilities - խեղութիւններ

download - ներբեռնել

general school - ընդհանուր կրթարան

inclusive school - ընդգրկակրթարան

integration - համարկում

lesson plan - դասի ծրագիր

motivation - ներմղում

nursery - մանկամտար

professional development - մասնագիտակական զարգացում

science experiment - գիտափորձ

Բովանդակություն

- 5 ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
- 7 ՀԻՆԳ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ
Պէյրութի Հայկազեան Համալսարանի Նախագահ
Վեր. Դոկտ. Փօլ Հայտօսթեան
- 9 ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԿԵՑՈՒԱԾՔԸ՝ ԸՆԴԳԻԿՄԱՆ ՀԱՆԴԷՊ
Անի Թորոսեան
- 19 ՆԵՐՄՂՈՒՄ
Շաղիկ Խիտավերտեան
- 25 ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԱՂԱԻՆԻ ՖՍՏԸԳՃԵԱՆ-ԱՌԱՔԵԼԵԱՆԻ ՀԵՏ
- 33 ԻՆՉՊԷՍ ԿԱՆԽԱՐԳԻԼԵԼ ՕՐԻՆԱԶԱՆՑՈՒՄԸ (CHEATING)
ԴԱՍԻ ԳՐԱԻՈՐ ՍՏՈՒԳՄԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ
Քէն Շոր
- 39 ՊԱՀՊԱՆԵՆՔ ՄԱՅՐԵՆԻՆ
Կարօ Առաքելեան
- 45 ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ՆԿԱՐԱԳՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԻՈՐՄԱՆ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԱՂԲԻԻՐՆԵՐ՝
ՀԱՄԱՑԱՆՑԻ ՎՐԱՅ
- 53 «ՀԱՅ ՄԱՆԿԱՎԱՐԺ»-Ի ԵՆՈՐՀԱՀԱՆԴԷՍԸ
- 57 ԲԱՐԻ ԵՐԹ՝ «ՀԱՅ ՄԱՆԿԱՎԱՐԺ»
Հ. Հ. Սփիւռքի Նախարար Հրանոյշ Յակոբեան

- 59 ԱԻԵԼԻ ԼԱՅՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԸՆԴԱՌԱՋ
Հ. Հ. Կրթութեան Նախարար Արմէն Աշոտեան
- 61 ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ՄԱՍՆԱԿՑԻԼ ՁԵՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ
Հայկական պետ. մանկավարժական համալսարանի
նախագահ Դոկտ. Արտուշ Դուկասեան
- 63 ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐ՝
«ՀԱՅ ՄԱՆԿԱՎԱՐԺ»-Ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ
- 65 ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՀՈՐԻՋՈՆԸ Կ'ԸՆԴԼԱՅՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ՈՒ ԱԿԱԴԵՄԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՆ ՀԵՏ
- 68 ԲԱՌԱՐԱՆ

“The Armenian Educator”

A tri-monthly journal of education and pedagogy

“The Armenian Educator” (Hay Mangavarj) is devoted to the improvement of education and the professional development of educators in Armenian schools worldwide. The journal, published tri-monthly in Armenian, is a resource for teaching and learning and provides an opportunity for research publication, information about developments of significance to educators, and commentary on issues of concern to the Armenian educational community worldwide.

By the Order of

His Beatitude Nerses Bedros XIX

Catholicos Patriarch of Cilicia of Armenian Catholics

Editor in Chief

Father Vartan Kazanjian

Associate Editor

Eva Koressian

Director

Vartan Tashjian

Published by

Office of Armenology Curriculum Development

“Saint Krikor Naregatsi” Center

Armenian Catholic Patriarchate

2078-5605 Geitawi Beirut-Lebanon

Tel: + 961 1 570559

Fax: 961 1 570562

Email: nareg@armeniancatholic.org

www.armeniancatholic.org

Printed in Lebanon

Pomigravure Printing House

June 2010



Հայրենիքից դուրս հայերէն լեզուով նոր պարբերականի լոյս աշխարհ գալը անչափ կարեւոր իրադարձութիւն է եւ հոգեւոր տուրք՝ ազգային արժէքների պահպանման հանդէպ, ուստի ողջունում եմ Դպրոցական հայագիտութեան զարգացման գրասենեակի այս ձեռնարկը:

Ուրախ եմ, որ «ՀԱՅ ՄԱՆԿԱՎԱՐԺ» պարբերականը կոչուած է հայ մանկավարժական հանրութեան համար ստեղծելու յարաբերութիւնների նոր միջավայր՝ Հայրենիքն ու Սփիւռքը համախմբելով մանկավարժական գործի եւ դպրոցական հայագիտութեան զարգացման խնդիրների շուրջ: Համոզուած եմ, որ նոր պարբերականը նոր շունչ ու խանդավառութիւն է հաղորդելու սփիւռքի կրթական հաստատութիւններին:

Օգտուելով ինձ ընձեռուած պատեհ առիթից՝ մեծ մանկավարժ Խաչատուր Աբովեանի անունը կրող հայկական պետական մանկավարժական համալսարանի փրոֆեսորա-դասախօսական անձնակազմի անունից մեր աջակցութիւնն ու համագործակցութիւնն եմ առաջարկում Ձեր հայրենանուէր ու հայանպաստ գործունէութեանը:

Հայ ուսուցիչներին մաղթում եմ համբերութիւն եւ ոգու կորով, Ձեր հայապահպան ձեռնարկներին՝ յաջող ընթացք եւ առատ հունձք:

Ամուր պահէք Պէյրութի հայ համայնքի հայ ոգին եւ դպրոցը՝ իբրեւ յենարան ունենալով Հայաստանն ու հայ ժողովրդին (*):

Արտուշ Դուկասեան
Խ. Աբովեանի անուան հայկական
պետական մանկավարժական
համալսարանի նախագահ

(*): Հատուածներ՝ «Հայ Մանկավարժ»-ի խմբագրութեան ուղղուած դրկտ. Արտուշ Դուկասեանի նամակէն: